ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

Հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ,ք.Կապան Շահումյան 20/32, 3301:
Հեռ. (+374 285)5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1150: **գինը՝ 100 դրամ**

ISSN 1829-3468

Սյունյաց երկիր

ՀԻՆԳՇԱԲԹԻ, 11 ԱՊՐԻԼԻ 2019Թ.
№ 8 (498)

www.syuniacyerkir.am

Դավիթ Գասպարյան. «Չարենցը, Բակունցը եւ մյուսները»

Հարցազրույց գրականագետ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Դավիթ Գասպարյանի հետ

- Պարոն Գասպարյան, Դուք այն եզակի գրականագետներից եք, որ հետեւողականորեն զբաղվում եք բակունցագիտությամբ՝ արձակագրի անտիպ գործերի ճակատագրով, մանավանդ Բակունցի կյանքի վերջին շրջանը միշտ Ձեր տեսադաշտում է: 1937-ի հուլիսի 8-ին Բակունցի գնդակահարությունից հետո բազում վարկածներ են շրջանառվել նրա գերեզմանի տեղի մասին: Բայց իրողությունն այն է, որ չգիտենք, թե որտեղ է ամփոփված մեծ գրողի աճյունը:

Ի վերջո, ե՞րբ պիտի լույս սփռվի այդ կնճռոտ հարցի վրա:

- Նախ՝ ես Սյունյաց աշխարհի երկու խոշորագույն դեմքերի մասին մենագրությունների հեղինակ եմ՝ Ակսել Բակունց եւ Համո Սահյան: Այդ երկու գրքերը վաղուց սպառվել են եւ այսօր բացառիկ պահանջարկ ունեն: Հենց վերջերս «Համո Սահյան» գիրքը ցանկացավ ունենալ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Գրիշա Ղարիբյանը, պահանջարկ ներկայացրեց Կապանի գրախանութը, Բակունցին նվիրված գրքի պահանջարկ կա ոչ միայն Հայաստանում, այլեւ Խարկովում, որտեղ այս տարի հայկական համայնքի հետ մեկտեղ նախատեսում ենք նշել գրողի ծննդյան 120-ամյակը եւ հուշաքանդակ փակցնել այն հաստատության պատին, որտեղ նա է ուսանել:

Գիտեմ, որ Սյունիքն ունի պատվախնդիր հայորդիներ, ովքեր «Սյունյաց երկիր» թերթի միջնորդությամբ պատրաստ են մեկենասության: Ցանկությունս է՝ այդ երկու գրքերը վերահրատարակել. ընդ որում՝ լրացումներով եւ նոր խմբագրությամբ: Մի ավարտուն բան եմ ուզում անել, թողնել եւ ամբողջ տպաքանակը նվիրել ձեզ: Սյունիքում բաժանեք դպրոցներին, գրադարաններին, ընթերցասեր ժողովրդին, ինձ կպահեմ տասնհինգ-քսան օրինակ:

Հարգելի մեկենասներ, այս գրքերի համար գումար մի՛ խնայեք՝ պահածը կորած է:

Սա որպես մեր զրույցի

էջ 4

Բաց նամակ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանին

էջ 3

Հարգելի պարոն վարչապետ

Դեռեւս մեկ տարի առաջ իշխանությունը վերցնելու լոզունգներից մեկը, քաղաքականության վրա օլիգարխիայի ազդեցության չեզոքացումն էր: Մինչդեռ Հայաստանի ամենամեծ օլիգարխիան՝ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը, շարունակում է ունենալ իր ուղղակի եւ անուղղակի ազդեցությունը տեղական եւ համապետական քաղաքականության վրա՝ ի ցույց դնելով Ձեր կամքի պակասը՝ կապված իրական եւ տոտալ ժողովրդավարություն մտցնելու հետ: Ահա մի քանի փաստ , որոնք թույլ են տալիս ինձ այդպես մտածել, եւ այդ փաստերից բխող մի քանի հարցեր.

1.Հեղափոխության ալիքի ժամանակակ ԶՊՄԿ-ն հայտարարեց, որ դադարեցնում է օգտագործել Արծվանիկի պոչամբարը: Մինչդեռ 30.03.2019 թ. Կապան խոշորացված համայնքի ավագանին ընդունեց որոշում՝ ըստ որի Արծվանիկ գյուղական բնակավայրի 38 հա հողատարածքները հանձնվեցին ԶՊՄԿ-ին՝պոչամբարի ընդլայնման համար:

Հարց. արդյո՞ք փոխվել է քաղաքական իրավիճակը եւ ԶՊՄԿ-ն կարող է այսուհետեւ իր ցանկացած որոշումներն անցկացնել Կապանի ավագանու միջոցով: Համայնքապետարանի պարզաբանման համաձայն՝ այդ որոշումն արդեն իսկ օրինականացնում է վերը նշված հողերի ապօրինի օգտագործումը, քանի որ այդ հողերն ավելի քան մեկ տարի առաջ անցել էին պոչամբարի տակ:

Հարց. որտե՞ղ են եւ ու՞ր են նայում Ձեր կառավարության մաս կազմող իրավապահ մարմինները, ինչո՞ւ քրեական գործեր չեն հարուցվել բնությանն անվերականգնելի վնաս հասցնելու փաստով:

Արդյո՞ք պարզվել են, թե ի՞նչ բիզնես կապեր ունեն Կապանի ավագանու կամ նրանց ընտանիքների անդամները ԶՊՄԿ-ի հետ եւ

Սյունիքի մարզում զրո բնակչությամբ՝ 10 գյուղ

2017թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ՝ Սյունիքում կան բնակավայրեր, որոնց բնակչության թիվը գրանցված է զրո՝ Կարդ, Կիցք, Ներքին Գիրաթաղ, Ոչեթի, Վերին Գեղավանք, Վերին Գիրաթաղ, Քարուտ (ներառված են Քաջարան համայնքի մեջ) Աղբուլաղ, Վանանդ եւ Ձորակ գյուղերը՝ (ներառված են Գորիս համայնքի մեջ):

Քննարկվեցին մարզական ոլորտին առնչվող խնդիրներ

Աշխատանքային այցով ապրիլի 4-ից 6-ը Սյունիքում էր ՀՀ սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարարության պատվիրակությունը (նախարարի պարտականությունները կատարող Գաբրիել Ղազարյան, նախարարության գլխավոր քարտուղար Վահե Էլոյան, նախարարության մարզական կազմակերպությունների եւ մանկապատանեկան սպորտի քաղաքականության վարչության պետ, հունահռոմեական ըմբշամարտի աշխարհի նախկին չեմպիոն Վաղինակ Գալուստյան): Պատվիրակության անդամները եղան Սյունիքի քաղաքների մարզադպրոցներում եւ մարզական կառույցներում, ծանոթացան նրանց վիճակին, մարզիկների մարզումային պայմաններին, հանդիպումներ եղան համայնքապետերի հետ, տեղում քննարկվեցին մարզական ոլորտի առջեւ ծառացած խնդիրները: Իսկ մարզպետարանի նիստերի դահլիճում հանդիպեցին մարզաշխարհի ներկայացուցիչների հետ: Գաբրիել Ղազարյանը մասնավորապես նշեց, որ նախարարության ենթակայության ներքո գտնվող մարզադպրոցների մարզիչների դրույքաչափերը տարբերվում են համայնքային ենթակայության մարզադպրոցների մարզիչների դրույքաչափերից, եւ այդ խնդիրը նախարարության տեսադաշտում է: Քննարկվեցին Սյունիքի մարզական ոլորտին առնչվող հարցեր, հանդիպմանը ներկա մարզական բնագավառի ներկայացուցիչները հանդես եկան հարցադրումներով: Կապանի աթլետիկայի մասնագիտացված մանկապատանեկան մարզադպրոցի տնօրեն, ՀՀ վաստակավոր մարզիչ Արսեն Պետրոսյանը բարձրացրեց մարզկենտրոնում աթլետիկական մանեժ, իսկ «Ռիո-2016» օլիմպիական խաղերի մասնակից, միջազգային տարբեր մրցույթների հաղթող Լեւոն Աղասյանը՝ Կապանի մարզադաշտում ժամանակակից վազքուղյակ ունենալու խնդիրները, ինչն էականորեն կխթանի մարզաձեւի զարգացմանը:

Խոսք եղավ կրթօջախները մարզագույքով համալրելու մասին: Կապանում ծանրամարտով զբաղվող աղջիկների մարզիչ Կարեն Հարությունյանը կանանց համար նախատեսված ծանրաձող ունենալու հարց հնչեցրեց, ինչը դրականորեն լուծելու պատրաստակամություն հայտնեց Սյունիքի մարզպետ Հունան Պողոսյանը:

Հանդիպման ավարտից հետո պատասխանելով **«Սյունյաց երկրի»** հարցերին՝ Գաբրիել Ղազարյանը նշեց, որ այցն արդյունավետ էր, արդեն ակնհայտ է, թե մարզում ինչ խնդիրներ կան, եւ ինչ լուծում պետք է տրվեր դրանց: Մասնավորապես, Մեղրիում ցայսօր մարզադպրոց չկա, եւ իրենք մտածում են այդ ուղղությամբ: Իսկ ահա Քաջարանում մանկապատանեկան սպորտը զարգացնելու նպաստավոր պայմաններ եւ կարողություններ կան, որ պիտի նպատակասլաց օգտագործվի: **«Սյունիքում կան մարզական ավանդույթներ, որոնք պիտի պահպանել եւ զարգացնել»,-**խոսքն այսպես եզրափակեց Գ. Ղազարյանը:

Վահրամ Օրբելյան

Ստեփանակերտում տեղի է ունեցել Աստվածամոր Սուրբ Հովանի Մայր Տաճարի օծման եւ բացման արարողությունը

Ապրիլի 7-ին տեղի է ունեցել Ստեփանակերտի Աստվածամոր Սուրբ Հովանի Մայր Տաճարի օծման եւ բացման պաշտոնական արարողությունը:

Աստվածամոր Սուրբ Հովանի Մայր Տաճարի օծման արարողությունն իրականացրել է Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ Գարեգին Բ-ն, որից հետո իր ձեռամբ մատուցել է առաջին պատարագը:

Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ Գարեգին Բ-ն իր օրհնանքը եւ հայրապետական մաղթանքն է հղել համայն հայությանը:

Նա ասել է, որ Մայր աթոռ Սուրբ Էջմիածնից եկել են ավետման տոնի այս խորախորհուրդ օրն իրենց օրհնությունն ու գնահատանքը փոխանցելու արցախահայ հայորդիներին

եւ կիսելու հոգեւոր խնդությունն ու խանդավառությունը Ստեփանակերտի նորակառույց Աստվածամոր Սուրբ Հովանի Մայր Տաճարի օծման առիթով:

«Արցախի գողտրիկ երկրամասում վեր խոյացած հայոց հավատքի նոր վկայական հիմնարկեքը մենք կատարեցինք 2006 թվականին՝ հավատով, որ Աստված միշտ մեզ հետ է եւ ձեռքբերումներ ու հաղթանակներ է պարգեւում մեր բոլոր բարի ձգտումների համար: Մեր ժողովրդի ժառանգած ջանքերով վեր խոյացած այս եկեղեցին Աստծո օրհնությամբ եւ շնորհով նոր ղողանջը պիտի դառնա մեր հավատքի ու հաղթական ոգու, նաեւ ազդարարողն Արցախի մեր ժողովրդի ազատ ու անկախ կյանքի անօտարելի իրավունքին, ինչպես նաեւ մեր քրիստոնեական հավատքի ու ազգային ինքնության անխորտակելի շաղկապվածության»,- մասնավորապես ասել է Ն.Ս.Օ.Տ.Տ Գարեգին Բ-ն:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքով՝ իրենք Արցախում են վերստին վկայելու, որ հակառակ բոլոր դժվարություններին, պարտադրված պատերազմներին, ավերին ու կոտորածին, անհնար է ընկճել հայի հավատքն ու ոգին, քանզի Աստված հայի հետ է:

Դիմելով Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ արքեպիսկոպոս Մարտիրոսյանին՝ Գարեգին Բ-ն մասնավորապես ասել է. **«Տարիներ շարունակ ջանք ու եռանդ չեք խնայել Արցախի հոգեւոր կյանքի զարթոնքի եւ զորացման համար, ինչպես եւ Արցախի սրտում այս եկեղեցու կառուցման նվիրական գործն ավարտին հասցնելու համար: Թող Աստված շնորհի Ձեզ քաջ առողջություն, օրհնություններ, ամենայն բարիք: Այս նվիրական եւ աստվածահաճո գործի իրականացման համար մեր գնահատանքն ենք հայտնում նաեւ Արցախի իշխանություններին, հայրենանվեր հովանավորներին, որոնց օգնությամբ եւ օժանդակությամբ իր դռները բացեց Աստվածամոր Սուրբ Հովանի Մայր Տաճարը»**:

Արարողությանը Ն.Ս.Օ.Տ.Տ Գարեգին Բ-ն Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ արքեպիսկոպոս Մարտիրոսյանին է նվիրել եպիսկոպոսական պանակե (կրծքի զարդ է՝ ձվածեւ մի տուփ, որի մեջ դրված են լինում սրբերի մասունքներ), իսկ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից Աստվածամոր Սուրբ Հովանի Մայր Տաճարին՝ Սուրբ ծննդյան տեսարանով սրբապատկեր:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր տաճարի կառուցման առաջին բարերար լուսահոգի Հրանտ Վարդանյանի երկու որդիներին՝ Կարեն եւ Միքայել Վարդանյաններին, շնորհել է «Գրիգոր Լուսավորիչ» շքանշան: Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ արքեպիսկոպոս Մարտիրոսյանն էլ Ն.Ս.Օ.Տ.Տ Գարեգին Բ-ին է հանձնել 17-րդ դարի սկիհ (Փոքր նստուկով, բարձր պատվանդանով եւ կափարիչով արծաթյա եկեղեցական անոթ, որի մեջ լցնում են գինի՝ Պատարագի ժամանակ նվիրագործելու համար):

Մեզ հետ զրույցում Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ արքեպիսկոպոս Մարտիրոսյանը շնորհավորել է հայ ժողովրդին Մայր Տաճարի բացման առթիվ:

Նա կարեւորել է եկեղեցաշինության սուրբ առաքելությունը եւ նշել, որ հայ ժողովրդը դարեր շարունակ ապրել եւ այսօր էլ շարունակում է ապրել Աստծո հավատքով:

«Ես խոստացել էի տաճար կառուցել, եւ այն ավելի քան 12 տարի անց իրականություն դարձավ, բայց մենք դեռ անելիքներ ունենք, լրիվությամբ չենք ավարտել, պիտի տարածքներն ամբողջությամբ բարեկարգենք: Տաճարը կառուցվածքով նման է Զվարթնոցին, իսկ արտաքինից Հռիփսիմե վանքին. այն երկու վանքերի միասնությունն է»,- ավելացրել է Արցախի թեմի առաջնորդը:

Արցախի պետական նախարար Գրիգորի Մարտիրոսյանն էլ ասել է, որ պետությունը միշտ էլ բարձր է գնահատել եկեղեցու դերը:

Նրա խոսքով՝ ԱՀ իշխանությունները եւս օժանդակել են Մայր տաճարի կառուցմանը, բայց մեծ մասն իրականացվել է հովանավորների կողմից, որոնց մեր երախտագիտությունն ենք հայտնում:

ԱՀ մշակույթի, երիտասարդության հարցերի եւ զբոսաշրջության նախարար Լեռնիկ Հովհաննիսյանի խոսքով՝ Մայր տաճարի բացումը մեծ նշանակություն կունենա հայության համար:

«Կցանկանայի, որ վերականգնվեին եւ վերակառուցվեին այն բոլոր խոնարհված հայկական եկեղեցիները, որոնք գտնվում են Արցախում, եւ մենք կունենանք այն պատմամշակութային արժեքները, որոնք ժառանգել են մեր պապերը: Մեր առաքելությունն է ոչ միայն նոր եկեղեցիներ կառուցելը, այլ նաեւ՝ հները պահպանելը»,- ավելացրել է Լ. Հովհաննիսյանը:

Միջոցառմանը ներկա էին նաեւ ԱՀ նախագահ Բակո Սահակյանն իր տիկնոջ Անահիտ Սահակյանի հետ, ԱՀ Ազգային Ժողովի նախագահ Աշոտ Ղուլյանը, ՀՀ ազգային անվտանգության ծառայության տնօրեն Արթուր Վանեցյանը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հոգեւոր դասի ներկայացուցիչներ, Մայր տաճարի հովանավորներ, հյուրեր ՀՀ-ից եւ Սփյուռքից, հավատացյալներ եւ այլք:

Նշենք, որ բազմանկյուն եռահարկ եկեղեցու բարձրությունն ավելի քան 40 մետր է, խաչի բարձրությունը՝ 3 մետր: Ճարտարապետը Գագիկ Երանոսյանն է:

Artsakhpress.am

«Սիսական» ջոկատի հրամանատար Աշոտ Մինասյանը չի մասնակցել ԵԿՄ համագումարին

Արցախյան հերոսամարտում եւ 2016-ի ապրիլյան իրադարձությունների ժամանակ մարտական փառապանծ ուղի անցած «Սիսական» ջոկատի ներկայացուցիչները, այդ թվում՝ հրամանատար Աշոտ Մինասյանը, հրաժարվել են մասնակցել ԵԿՄ՝ ապրիլի 7-ին կայացած համագումարին:

- Արաբոյի Մանվելը եւ Մալաթիայի Սուրիկն ինձ հրավիրել էին համագումարին, բայց գերադասեցի չմասնակցել՝ նրանց ներկայացնելով մեր դիրքորոշման շարժառիթները, - «Սյունյաց երկրի» լրագրողի հետ զրույցում ասաց «Սիսական» ջոկատի հրամանատար Աշոտ Մինասյանը, նույն ինքը՝ Աշոտ Երկաթը:

Ազատամարտիկների սիսիանյան փաղանգը, դեռեւս Մանվել Գրիգորյանի օրերից, հիմնականում բաժանված է երկու մասի:

Կա ԵԿՄ մասնաճյուղ, որի ղեկավարն Արայիկ Վարդանյանն է: Բայց ազատամարտիկների մեծ մասը միավորված է Աշոտ Մինասյանի գլխավորած «Խաչակիր» մշակութային, հայրենասիրական, հասարակական կազմակերպության շուրջը:

Սիսիանցի ազատամարտիկների այդ թեւը ժամանակին հրաժարվել է գործակցել նաեւ Մանվել Գրիգորյանի գլխավորված ԵԿՄ-ի հետ:

Անգամ 2016-ի ապրիլյան իրադարձությունների ժամանակ «Սիսական» ջոկատը հրաժարվեց կանգնել Մանվել Գրիգորյանի դրոշի ներքո եւ առաջնագիծ գնաց սեփական նախաձեռնությամբ ու մենակ՝ այնտեղ կատարելով Արցախի պաշտպանության բանակի հրամանատարության առաջադրանքը:

Եվ, այդուհանդերձ, ինչո՞ւ է Աշոտ Մինասյանի գլխավորած «Սիսական» ջոկատը հրաժարվում մտնել ԵԿՄ կազմի մեջ:

Ահա եւ հրամանատար Աշոտ Մինասյանի պարզաբանումը՝ **«Մանվել Գրիգորյանի գլխավորած ԵԿՄ-ի գործելակերպի հետ մենք համաձայն չենք եղել տարիներ շարունակ, ինչի համար էլ չենք միացել այդ կառույցին, բայց...Մանվելից հետո էլ ԵԿՄ-ում, կարծեք, էական, սկզբունքային փոփոխություններ չեն եղել, ինչն ակնհայտորեն երեւաց համագումարի ընթացքում: Այն կորիզը, որ Մանվելի հետ էր, հիմա էլ նորերի հետ է...Թող շարունակեն այդպես գործել: Սակայն մենք չենք կարող միանալ այդ կառույցին եւ կշարունակենք գործել այնպես, ինչպես տարիներ շարունակ: Հարկ եղած դեպքում էլ, ինչպես Արցախյան պատերազմի բոլոր փուլերում, առաջինը կհասնենք առաջնագիծ եւ Արցախի պաշտպանության բանակի հրամանատարության առաջադրանքը կկատարենք: Ի վերջո կարեւորը կառույցի արտաքին ձեւը չէ, արարողությունները չեն, այլ՝ բովանդակությունը: Իսկ բովանդակությունը կամ առաքելությունը մեկն է՝ անհրաժեշտության դեպքում կանգնել սահմանը պահող մեր երեխաների կողքին եւ ապահովել Արցախի ու Հայաստանի սահմանների անձեռնմխելիությունը, ինչին պատրաստ ենք»:**

«Սյունյաց երկիր»

Կապանի ավագանին միաձայն որոշմամբ 38 հա հող է հատկացրել Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատին



Կապանի ավագանին միաձայն որոշել է Կապան համայնքի կազմում գտնվող Արծվանիկ գյուղի Նոր ջուր թաղամասի արդյունաբերական, ընդերքօգտագործման եւ այլ արտադրական նշանակության օբյեկտների մոտ 38 հա հողերը, որոնք համայնքային սեփականություն են, առանց մրցույթի, կառուցապատման իրավունքով տրամադրել Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատին:

Նշենք, որ Նոր ջուր թաղամասը հենց Արծվանիկի պոչամբարի տարածքն է: Ինչպես հայտնի է, ԶՊՄԿ-ն այստեղ է լցնում իր արտադրական պոչանքները: Տրամադրվող հողերի դիմաց նախատեսվում է տարեկան ավելի քան 7 միլիոն դրամի մուտք ապահովել համայնքային բյուջե:

ԶՊՄԿ-ին եւ պոչամբարին վերաբերող այս որոշումն ընդունվեց առանց կապանցի ակտիվիստների դիմադրության: Հիշեցնենք, որ անցյալ տարի վերջիններս մի քանի անգամ բողոքի ակցիա էին իրականացրել ավագանու այն նիստերի ժամանակ, որոնց օրակարգում ընդգրկված էին ԶՊՄԿ-ին հողեր հատկացնելու հարցեր:

Հայտնել ենք, որ 2015-ին կառավարությունը որոշել է գերակա հանրային շահի անվան տակ վերցնել Արծվանիկ, Սեւաքար, Աճանան, Չափնի եւ Սյունիք գյուղերի 492 հա հողերը (պետական, համայնքային եւ քաղաքացիներին սեփականության իրավունքով պատկանող): Գործադիրը նշված գյուղերի ղեկավարներին առաջարկել է հողերը վերցնելուց հետո փոխել դրանց նպատակային նշանակությունը՝ դարձնելով արդյունաբերության, ընդերքօգտագործման եւ այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր, ապա առանց մրցույթի, կառուցապատման իրավունքով տալ ԶՊՄԿ-ին: Այդ հողերը նախատեսված է օգտագործել Արծվանիկի պոչամբարի ընդլայնման համար: Քանի որ 2017-ին Կապանի տարածաշրջանի գյուղերը խոշորացվել ու միացել են քաղաքին, այժմ Կապանի համայնքապետարանն է կառավարության որոշման իրագործման պատասխանատուն: Ակտիվիստների միջամտության արդյունքում մինչ օրս Կապանի ավագանին այս 492 հա հողերի վերաբերյալ որոշում չի ընդունել:

Նախկինում կրկին ակտիվիստների միջամտությամբ չի ստացվել քննարկել Արծվանիկի Նոր ջուր թաղամասի 51 հա հողերն առանց մրցույթի, կառուցապատման իրավունքով ԶՊՄԿ-ին տրամադրելու հարցը: Խոսքը թաղամասի 2, 3 եւ 4 հասցեների մասին է, որոնց նպատակային նշանակությունն արդեն փոխված ու դարձված է արդյունաբերության, ընդերքօգտագործման եւ այլ արտադրական նշնակության օբյեկտների հողեր: Թաղամասից 38 հա ԶՊՄԿ-ին տալու մասին ընդունված որոշումը վերաբերում է 5, 6, 7, 8, 9 եւ 10 հասցեներին:

hetq.am

Պարզաբանում է Կապանի համայնքապետարանը

Հարգելի համաքաղաքացիներ, քանի որ Կապանի ավագանու վերջին՝ մարտի 29-ի նիստի օրակարգում տեղ գտած 21-րդ (Կապան համայնքի վարչական տարածքում, համայնքային սեփականություն հանդիսացող Կապան համայնքի Արծվանիկ գյուղի Նոր Ջուր թաղամասի թիվ 5, 6, 7, 8, 9 եւ 10 հասցեներում գտնվող արդյունաբերության, ընդերքօգտագործման եւ այլ արտադրական նշանակության օբյեկտների հողամասն առանց մրցույթի կառուցապատման իրավունքով «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերությանը տրամադրելու մասին) հարցը քննարկումների առիթ հանդիսացավ, պարզաբանում ենք.

ՀՀ կառավարության 2009 թվականի ապրիլի 16-ի 389-Ն որոշման համաձայն որոշվել է՝ Սյունիքի մարզի Արծվանիկ գյուղի համայնքային, պետական եւ իրավաբանական սեփականություն հանդիսացող 102 հա հողերը փոխադրել արդյունաբերական, ընդերքօգտագործման եւ այլ արտադրական նշանակության կատեգորիա: Ըստ որի՝ համայնքն այդ հողամասերն առանց մրցույթի, կառուցապատման իրավունքով պետք է տրամադրի «ԶՊՄԿ» ՓԲ ընկերությանը: Հարկ է նշել, որ վերոնշյալ հասցեների հողերն արդեն իսկ պոչամբարի տակ են:

Կապանի համայնքապետարան

«Սյունիք» ՋՕԸ. ավելի քան կես տարի աշխատավարձ չեն ստացել

«Սյունիք» ջրօգտագործման ընկերության (ՋՕԸ) մոտ 8 տասնյակ աշխատողներ դեռեւս անցյալ տարվա հուլիսից աշխատավարձ չեն ստացել: Թե ինչպես է հնարավոր, որ 21-րդ դարում մարդիկ կարող են աշխատել ու ամիսներով աշխատավարձ չստանան, նախ փորձեցինք պարզել ջրային տնտեսության պետական կոմիտեից:

Ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահի տեղակալ Միհրան Հովհաննիսյանը «Հայկական ժամանակ»-ի հետ զրույցում ներկայացրեց, որ **ՋՕԸ-երը որոշակիորեն ինքնավար եւ անկախ մարմիններ են, որոնք ձեւավորվում են ջրօգտագործողների կողմից: Նրանք ընտրում են վարչական խորհուրդ՝ որպես ղեկավար մարմին, որն էլ նշանակում է ՋՕԸ տնօրենին, գլխավոր հաշվապահին, հաստատում իրենց ֆինանսական հոսքերը, ծախսերը, հաստիքացուցակը եւ այլն:**

Հովհաննիսյանը հայտնեց, որ ՋՕԸ աշխատակիցների աշխատավարձերի ուշացումներն ու չվճարման խնդիրները հիմնականում կապված են ընկերության անցած տարվա հավաքագրումները թերի կատարելու հետ: Ջրօգտագործողների կողմից վարձավճարները չեն վճարվել, ինչպես նաեւ պետությունն իր վրա է վերցրել սահմանամերձ Մեղրիի ոռոգման ջրի վճարի 50 տոկոսը, որն այս տարի չի կատարվել:

ՋՕԸ-երի եկամուտները գոյանում են պետական բյուջեից հատկացվող սուբսիդավորումից, ոռոգման ջրի մատակարարման դիմաց վճարումներից եւ անդամավճարներից: Պարզվում է, որ անցած տարվանից ՋՕԸ-երի եկամուտները սպասված մակարդակով չեն հավաքվել, որի պատճառով էլ գոյացել է ընկերության հսկայական պարտքը՝աշխատավարձերի պարտքը ներառյալ:

«Սյունիք» ՋՕԸ-ին այս տարվա համար նախատեսված 166 մլն դրամ սուբսիդիայի գումարից մոտ 108 միլիոն դրամն արդեն հատկացվել է, մնացած մասը նախատեսվում է 2-րդ եռամսյակում՝ ապրիլ ամսին, բայց դա ընկերության համար հարցի լուծում չէ, քանի որ իրենք ունեն մոտ 75 մլն դեբիտորական պարտք, որ ջրօգտագործողները չեն վճարել,-ասաց Ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահի տեղակալ Միհրան Հովհաննիսյանը:

Հովհաննիսյանը տեղեկացրեց նաեւ, որ ընկերությունն ունի մշտական ու սեզոնային աշխատողներ, որոնք ընդունվում են ոռոգման սեզոնը սկսվելուց եւ ազատվում՝ ավարտվելուց հետո: **«7-8 ամիս աշխատավարձ չստանալը չի վերաբերում սեզոնային աշխատողներին, ովքեր սեզոնի վերջում ազատվել են աշխատանքից եւ եթե նրանց աշխատավարձը մինչեւ հուլիս-օգոստոս ամիսները չի վճարվել, դա նշանակում է, որ իրենց աշխատավարձը 7-8 ամիս է՝ չեն ստացել, այլ ոչ թե 7-8 ամսվա աշխատավարձ չեն ստացել»**,-ասաց նա:

«Հայկական ժամանակ»-ը կապ հաստատեց նաեւ «Սյունիք» ՋՕԸ տնօրեն Սահակ Համբարձումյանի հետ: Վերջինիս խոսքով՝ **ընկերությունը սպասարկում է մոտ 1500 հեկտար տարածություն, ունի մոտ 6 հազար բաժանորդ, ինչպես նաեւ ոռոգման ջրով սպասարկում է 40 եւ ավելի բնակավայրեր: Ջուր օգտագործող ընկերությունների՝ ՋՕԸ–երի ընդլայնումն է պատճառ հանդիսացել, որ մարզում միավորվել են Գորիսի, Սիսիանի, Մեղրիի ՋՕԸ–երը: Միավորումից հետո ընկերությունները հանդես են գալիս որպես մեկ ՋՕԸ՝ Սյունիք ՋՕԸ:**

Մեր հարցին, թե ինչու՞ աշխատակիցների աշխատավարձերը 7-8 ամիս չեն վճարվել եւ արդյո՞ք աշխատավարձերի չվճարման եւ ուշացման պատճառներից մեկն էլ հենց ՋՕԸ–երի միավորումն է, տնօրեն Համբարձումյանը պատասխանեց. **«Նախ երբ 2017 թ. սկզբներին մեր ջրօգտագործման ընկերությունները կազմավորվել են, արդեն ունեցել ենք 5 ամսվա աշխատավարձի պարտք, բացառությամբ Ղափանի, մնացած ընկերություններն ունեցել են ե՛ւ աշխատարձերի պարտք, ե՛ւ հարկային պարտքերի կուտակումներ: Ընթացքում բավարար ֆինանսավորումներ չեն եղել, որ առաջացած ճեղքվածքը փակվի, դրան էլ գումարած այն, որ Մեղրու տարածքում որպես սահմանամերձ շրջան, ոռոգման ջրի դիմաց վճարի 50 տոկոսը փոխհատուցում է պետությունը, բայց անցյալ տարի մեր ՋՕԸ-ն այդ փոխհատուցումն էլ չի ստացել»:**

ՋՕԸ տնօրեն Համբարձումյանը նաեւ հայտնեց, որ պետությունից «Սյունիք» ՋՕԸ-ին այս տարվա համար նախատեսված 166 մլն դրամ սուբսիդիայի գումարից

էջ 6

Բաց նամակ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանին

էջ 1

արդյո՞ք չկա շահերի բախում:

2.Ընդերքի եւ բնապահպանական տեսչական մարմնի ղեկավար Արթուր Գրիգորյանն ազատվեց պաշտոնից այն օրը, երբ ավարտվեցին տեսչական մարմնի կողմից ԶՊՄԿ-ի ստուգումները: Ձեր կառավարությունը եւ Դուք պետք է չափից դուրս ջանքեր թափեք, որպեսզի մեզ ապացուցեք, որ դա պարզապես զուգադիպություն էր: Կապանի հասարակությունը մեծ հույսեր էր կապում պարոն Գրիգորյանի կողմից ստեղծված ԶՊՄԿ-ի գործունեությունն ուսումնասիրող աշխատանքային խմբի հետ, որի կազմում էին հասարակական կազմակերպություններ, բնապահպաններ, մասնագետներ: Այդ խմբի աշխատանքը փաստացի դադարեցվել է պարոն Գրիգորյանի՝ աշխատանքից հեռացվելուն զուգահեռ:

Հարց. մինչեւ ե՞րբ է ԶՊՄԿ-ն հանելու կամ նշանակելու Ձեր կառավարության անդամներին: Ինչու՞ աշխատանքային խումբը փաստացի չի գործում:

3.Ձեր ամենակարեւոր խոստումներից մեկը հանրաքվեների միջոցով ուղղակի ժողովրդավարության ներդրումն էր Հայաստանի Հանրապետությունում: Ամեն անգամ, երբ Կապանի հասարակությունը պահանջում է համայնքին հուզող կարեւոր հարցերը լուծել հանրաքվեների միջոցով, ստանում ենք պատասխան, որ դրա համար բյուջեում գումար չկա: Դա նաեւ նշանակում է, որ մեկ տարվա ընթացքում Ձեր կառավարությունը ոչ մի բան չի արել, որպեսզի հանրաքվեների համար անհրաժեշտ գումարները, որպես առաջնահերթություն, նախատեսվեն համայնքային բյուջեի մեջ: Ձեր ցանկության դեպքում այդպիսի օրենք կընդունվեր երեք ամսում: Լռում է Ձեր կառավարությունը, լռում է Տարածքային կառավարման նախարարությունը: Մինչեւ ե՞րբ Ձեր խոստումներն ուղղակի վարման նախարարությունը: Մինչեւ ե՞րբ Ձեր խոստումներն ուղղակի ժողովրդավարության մասին կմնան որպես խոստումներ:

4.Կապանում ոչ մեկի համար գաղտնիք չէ, որ ԶՊՄԿ-ն եղել է Հայաստանի Հանրապետական կուսակցության դրամապանակը եւ մեծ հավանականությամբ մնում է այդպիսին: Մեզ մոտ ստեղծվում է տպավորություն, որ իշխանություն ունենալու համար պարտադիր չէ ունենալ պառլամենտական մեծամասնություն, այլ բավական է տնօրինել ԶՊՄԿ-ի ֆինանսական հոսքերը: Բացի այդ ստեղծվում է տպավորություն, որ ինչպես նախորդ, այնպել էլ Ձեր կառավարությունը Կապանն ու Քաջարանը դիտարկում են որպես հումքային կցորդ: Մինչեւ ե՞րբ է շարունակվելու այն քաղաքականությունը, որի հետեւանքով մենք շարունակում ենք ունենալ մի իրավիճակ, որտեղ օլիգարխները շարունակում են ունենալ քաղաքական ազդեցություն, իսկ այլընտրանքային տնտեսությունը մնում է դեպրեսիվ վիճակում:

Հարգանքներով՝
«ԱՐԿ» բնապահպանական ՀԿ ծրագրերի համակարգող Արմեն Ղազարյան
03.04.2019թ
Արմեն Վիետի Ղազարյանի ֆեյսբուքյան էջից

Դավիթ Գասպարյան. «Չարենցը, Բակունցը եւ մյուսները»

Հարցազրույց գրականագետ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Դավիթ Գասպարյանի հետ

էջ 1

Նախաբան, հիմա պատասխանեմ Ձեր հարցին:

Մենք տարօրինակ ժողովուրդ ենք՝ պատմական հայրենիքի հիշողությունը, ազգային արժանապատվությունը, հայրենիքում ժողովրդի համախմբման հեռանկարը, նոր սերունդի վաղվա հույսն անգամ կորցնելով, առանց ետ նայելու, ուզում ենք առաջ գնալ: Երկիր ենք կորցրել, պատմական հայրենիք ենք կորցրել, մոտակա անցյալի հետ կապն ենք կորցնում, բարոյական ու հոգեւոր արժեքներ ենք կորցնում եւ առանց հիշողության առաջ նայում: Այսպիսի ժողովուրդը կարող է գոյատեւել, բայց ոչ առաջընթաց ունենալ. ընդամենն ապրել ու դիմանալ, բայց ոչ այն բարձր որակով, որով առաջանցիկ ժողովուրդներն են ապրում: Մեր վիճակը շատ ծանր է, դա նաեւ անցյալի արժեքների հանդեպ ունեցած անփույթ վերաբերմունքից է: Գերմանացիները երկրորդ համաշխարհայինում պարտվեցին Խորհրդային Միությանը, բայց երբ կյանքը փոխվեց, դիմեցին Ռուսաստանի Դաշնությանը՝ պատերազմի այն վայրերում, որտեղ շատ գերմանացի զինվորներ էին սպանվել, թույլատրել հուշակոթողներ տեղադրել նրանց հիշատակին: Զինվորն իր պարտականությունն է կատարել եւ կատարում, անկախ նրանից՝ ո՞վ է ղեկավարը՝ Ադոլֆ Հիտլե՞րը, թե՞ Անգելա Մերկելը: Եվ Ռուսաստանը թույլատրեց զանգվածային սպանության վայրերում հուշաքարեր տեղադրել:

Իսկ մենք մեր հանճարների՝ Չարենցի, Բակունցի գերեզմանի տեղն անգամ չգիտենք:

1988 թվականից սկսած՝ տարիներ շարունակ, Չարենցի գերեզմանի տեղն էի որոնում. բահերն առած, նվիրյալների խումբը ետեւիցս գցած, ոստիկանների հետապնդող հայացքներից թաքնվելով՝ Չարենցի աճյունի հետքերն էինք ուզում գտնել:

Ընդ որում՝ Չարենցի մասին գրած հուշերում Մորուս Հասրաթյանը նշում էր, որ ինքը 1950- ականների կեսերից այդ հարցն անընդհատ արծարծել է՝ գտնել Չարենցի թաղման տեղը, ասում էր՝ դեռ կան մարդիկ, ովքեր հիշում են, ովքեր գաղտնիքներ կարող են գիտենալ, բայց ապարդյուն:

Իմ որոնումներն էլ կիսատ մնալով՝ արդյունք չտվեցին, որովհետեւ ընտանիքի անդամները՝ առաջին հերթին ավագ դուստր Արփենիկ Չարենցն ասում էր՝ Չարենցի գերեզմանը պետք չէ հայտնաբերել, Չարենցին որոնեք իր ստեղծագործությունների մեջ: Մինչդեռ ինքը՝ բանաստեղծն այլ կերպ էր մտածում.

Քանզի մեռյալների մոխի՛րն է ամենապինդ կիրը,

Ամենապինդ շաղախը եւ առհավատչյան,-

Եվ նրանո՛վ է դառնում երկիրը – երկիր,

Եվ ժողովուրդը ժողովուրդ, եւ գալիքը – գալիք՝ անհողդողդ ու անճառ...

Մի անգամ ինձ հանդիպեց լուսահոգի Մեսրոպ արքեպիսկոպոս Աշճյանը, գիտեր, որ զբաղվում եմ Չարենցի գերեզմանի տեղի որոնմամբ: Ասաց, գնանք, տեղը ցույց տվեք, տանենք մի խաչքար տեղադրենք: Այդ օրը միասին գնացինք, եւ հավանական տեղանքը ցույց տվեցի: Խաչքար տեղադրելու հարցով պայմանավորվել էինք հաջորդ օրը հանդիպել, հանդիպումն իր հորդորով չկայացավ, հեռախոսով հարցրի՝ ի՞նչ ենք անելու: Պատասխանեց, թե ժառանգների հետ զրուցեցի այդ խնդրով, խորհուրդ չտվեցին: Ահա այդպիսի բաներ: Ընդ որում՝ ես ինքս Արփենիկ Չարենցին հարցրել եմ՝ գուցե Դուք՝ որպես ժառանգ, գերեզմանի մասին մի բան գիտեք, որ մենք չգիտենք: Ինձ պատասխանեց՝ ո՛չ, ինչ էլ գիտեմ, քո գրածներից գիտեմ:

Որոնումները դադարեցրի: Խմբի անդամները դժգոհ մնացին:

Ամոթ մեզ, որ Չարենցի գերեզմանը չենք գտնում, մի՞թե մենք, որպես մտավորական, ապագային նայելու բարոյական իրավունք ունենք: Հաջորդ սերունդները մեզ չեն ների:

- Անցնենք Բակունցին, գիտենք, որ նրա գերեզմանի որոնման ուղղությամբ էլ շատ ջանք եք թափել:

- Ես Բակունցի դատական գործը հիմնավորապես ուսումնասիրել եմ



եւ հրապարակել երկու տեղ՝ «Ակսել Բակունց. գործ No 4131» եւ ավելի ամբողջական՝ իմ «Ակսել Բակունց» մենագրության մեջ: Այդտեղ ըստ վավերագրերի ամեն ինչ մանրակրկիտ ներկայացրել եմ՝ երբ ձերբակալեցին, ինչպես քննեցին, բանտից ինչ դիմումներ գրեց եւ այլն, եւ այլն: Բայց գերեզմանի հարցում անհայտություն կար:

Շատ լավ ուսումնասիրել եմ այն բանահյուսական պատումները, որոնք կային:

1969 թվականին նշվում էր Բակունցի 70-ամյակը, «Литературная газета»-ն մի հոդված էր տպագրել: Ուկրաինայից մի մարդ եկավ Երեւան՝ ներքին գործերի նախկին զինծառայող, ով կարդացել էր հոդվածը եւ իմացել, թե ո՞վ է Բակունցը, հանդիպեց գրական շրջանակի մարդկանց՝ թե Բակունցին գնդակահարող եռյակի անդամներից մեկը ես եմ եղել: Այն ժամանակ կատարող զինվոր էր, հիմա լուրջ մտավորական մարդ էր, բայց գնդակահարման տեղը չհիշեց:

Զանգու անունը խոսքի մեջ կա՛մ ինքը տվեց կա՛մ մենք, տարանք Զանգվի ձոր՝ չհիշեց, իսկ նրա հիշածը շատ ընդհանուր էր, մանրամասները մոռացել էր: Միայն այն էր ասում, թե՝ ստիպեցինք ինքը փորեց իր գերեզմանափոսը, վերջում էլ ծխախոտ ուզեց ու ծխեց մինչեւ վերջ, որպեսզի շրթունքները չայրի՝ կռացավ գետնից վերցրեց երկու չոփ եւ, դրանցով պահած. ծխեց մինչեւ կոթունը գրեթե մինչեւ վերջ սպառվեց:

Ես շատ որոնեցի Բակունցի գերեզմանի տեղի մասին որեւէ վկայություն, այս ու այն կողմ շատ ընկա, շահագրգիռ մարդկանց դիմեցի, բայց ապարդյուն: Հեռու տեղ էի որոնում, ի վերջո գտա ամենամոտիկ մի տեղ, եւ այդ մոտիկ տեղի անունն է՝ Գուրգեն Մահարի՝ «Ծաղկած փշալարեր»: 1988 թվականին գրեցի «Ծաղկած փշալարեր» գրքի առաջաբանը: Այդ ժամանակ տպագրվեց կրճատված տարբերակը: Ճշմարիտն ասած՝ ինքս էլ չգիտեի, որ կրճատված տարբերակն է, քանի որ բնագիրը ձեռքիս չէր, տպագրվում էր նույն թվականին հրատարակված ամսագրային տարբերակից: Բայց երբ հետո Գուրգեն Մահարու կյանքի եւ ստեղծագործության մասին գիրք էի գրում, նորից կարդացի «Ծաղկած փշալարերը»՝ արդեն ամբողջական տարբերակը: Եվ ահա Գուրգեն Մահարին գրում է, որ ինքը, երբ Երեւանի քաղաքային բանտում էր, 1936 թվականի օգոստոսի 9-ին նրան էլ էին ձերբակալել, բանտապետը՝ Սահակ Ասլանով անուն - ազգանունով Թիֆլիսից եկած դաժանագույն մի սրիկա, Բերիայի դրածոն մի «գեղեցիկ» օր հայտնվում է իրենց խցում: Այդ դաժանագույն մարդը գրողներին կանչում է իր մոտ եւ ասում՝ գիտեմ, ինձ կգնդակահարեն, հիմա եկեք ասեմ, թե որտեղ են գնդակահարել Ակսել Բակունցին: Նախ ասաց, որ գնդակահարող եռյակից մեկն ինքն է եղել, մյուսը՝ հավանաբար վերը նշած ուկրաինացին, մյուսն էլ կբացահայտվի: Ասում է՝ Բակունցին գնդակահարել ենք Թոխմախ լճի շրջակայքում, իրականացրինք գնդակահարությունը, այդտեղ էլ թաղեցինք, եկանք, արձանագրություն կազմեցինք, որ Բակունցի գնդակահարությունն ի կատար է ածվել: Միջանկյալ ասեմ, որ Թոխմախ լճի անունը եղել է Վարդավառի լիճ:

Ի դեպ, գնդակահարությանը նախորդել է մի ամբողջ օր, եւ Բակունցն իմացել է դատավճիռը՝ իր գլխին գալիքը: Եթե օրերից մի օր Բակունցի մասին վեպ գրելու լինեմ՝ նրա կյանքին այդ գիշերվա միջով պիտի նայեմ, ինչպես ինքը:

Գիտեի, որ Թոխմախ լճի տարածքում ուրիշներն էլ են գնդակահարվել, զանգվածային գնդակահարության տեղ է: Սա նշանակում է, որ եթե այդտեղ որոնումներ կատարվեն, կգտնվեն գնդակահարվածների ոսկորներ: Այդտեղ կարող ենք դնել մի հուշարձան՝ 1937 թվականի զոհերի հիշատակին, ես առաջարկել եմ դեռ 1988 թվականին: Շատերը ողջունեցին այդ գաղափարը, անգամ ճարտարապետների միությունը խոստացավ անվճար անել նախագիծը, բայց պաշտոնական միջամտություն չեղավ: Իսկ ես միայնակ ի՞նչ կարող էի անել...

Տգետ մարդիկ, այն էլ դպրոցական դասագրքում, Բակունցի գնդակահարության տեղի մասին սխալ տեղեկատվություն են տալիս: Չի՛ կարելի աշակերտին մոլորեցնել...

- Բակունցի եղերական մահով անավարտ մնացին նրա ստեղծագործական մտահղացումները, մասնավորապես «Խաչատուր Աբովյան» եւ «Կարմրաքար» վեպերը: **Դուք միշտ հետաքրքրվել եք դրանց ճակատագրով, նաեւ փնտրտուքներ արել Հայաստանից դուրս գտնվող պահոցներում**:

- Իմ«Ակսել Բակունց: Կյանքը եւ ստեղծագործությունը» աշխատությունը գրելու ժամանակ եղել եմ Մոսկվայի պահոցներում, որովհետեւ, ըստ նախնական լուրերի, «Խաչատուր Աբովյան» վեպը թարգմանվել էր ռուսերեն, թարգմանիչն էլ Մարիետա Շահինյանի ամուսին Հակոբ Խաչատրյանն էր: Մի խոսքով, այդտեղ արդյունքի չհասա, հետեւողական որոնումների համար ժամանակը կարճ էր: Եկա եւ նամակ գրեցի Կենտրոնական գրական պահոցի տնօրենին: Պատասխանեց՝ իրենց մոտ Բակունցից որեւէ բան չկա: Այդ փաստաթուղթը հրապարակված է Ակսել Բակունցին նվիրված իմ հիշյալ մենագրության մեջ:

Բակունցը կորած համարվող մեկ ուրիշ ստեղծագործություն էլ ունի՝ «Հայկական մանրէ» վերնագրով երգիծական վիպակ, ժամանակին կարդացել են Չարենցը, Խանջյանը, Էդուարդ Չոփուրյանը, շատերի ձեռքով է անցել եւ ներկայացվել պետհրատ: Բակունցը դատավարության ժամանակ ասել է՝ գտե՛ք այդ ստեղծագործությունը եւ կցեք իմ մեղադրական գործին: Սա էլ որոնելու բան է պետհրատի արխիվում՝ պահպանվե՞լ է, չի՞ պահպանվել: Գործ է, որ պիտի արվի:

Է՛հ, արեւի լույսից ինձ զրկելով, արխիվների փոշիների միջից ինչքան հույժ կարեւոր վավերագրեր գտա, հայտնաբերեցի ու հանեցի, այնքան ինձ վրա հարձակվեցին. ընդ որում՝ եւ՛ նրանք, ովքեր ապրել էին Բակունցի գնդակահարության ժամանակ եւ համոզված էին, որ ինչպես նա, այնպես էլ Չարենցը, Մահարին եւ մյուսները ժողովրդի թշնամիներ են, եւ՛ նրանք, ովքեր իմ գրքերը կարդալով ու արտագրելով էին մտել գրականություն: Այսպես ինձ միայն մեղադրանք ու հալածանք բաժին հասավ:

Մի՞թե ամոթ չէ, որ Չարենցի «Գիրք մնացորդաց» անտիպների հատորը մինչեւ հիմա կալանավորված է գրողի տուն - թանգարանում: Այս ընթացքում մշակույթի նախարարներ փոխվեցին, բայց մեկը մյուսից մշակույթից հեռու՝ չգիտես ո՞ւմ դիմես:

էջ 8

«Սյունյաց երկրի» բացառիկ համարներն ունեն համազգային նշանակություն

Ես «Սյունյաց երկիր» թերթի ուշադիր ընթերցող եմ, համենայնդեպս քիչ համարներ կան, որ բաց եմ թողնում, առավելապես ուշադիր եմ թերթի բացառիկ համարների հանդեպ: Այն պիտի ասեմ, որ այդ բացառիկներն ունեն հանրագիտարանային ընդգրկում, ակնհայտ է, որ յուրաքանչյուր համար տքնաջան աշխատանքի արդյունք է: Կարեւորում եմ ոչ միայն հոդվածները, այլեւ լուսանկարների առատությունը:

Ընդհանրապես մեր մարզային թերթերի մեջ «Սյունյաց երկիր»-ը շահեկանորեն առանձնանում է եւ ունի ոչ միայն տեղային՝ սոսկ մարզային նշանակություն, անգամ ոչ միայն սոսկ հանրապետական, այլեւ համազգային նշանակություն: Որովհետեւ թերթը, հատկապես բացառիկ համարների ընդգրկումով, շատ պիտանի եւ անհրաժեշտ է մեր ժողովրդին, նրանց, ովքեր հետաքրքրվում են գրականությամբ, մշակույթով, երկրի պատմությամբ, մեծ անհատների կյանքով ու գործունեությամբ եւ այլն:

Բարձր եմ գնահատում նաեւ խմբագրակազմի աշխատանքը Մորուս Հասրաթյանին նվիրված համարի կապակցությամբ, որի շնորհանդեսին ներկա եղա: Համարը հարուստ ընդգրկում ունի: Ինձ ոգեւորեցին Համո Սահյանի չորս անտիպ բանաստեղծությունները, որոնցից երեքը ներկայացված են նաեւ ինքնագրերի լուսապատճեններով: Դրանք գրական արժեք են:

Ինչ վերաբերում է Մորուս Հասրաթյանին, շատ հիմնավոր ներկայացված է նախ կենսամատենագիտությամբ, այնուհետեւ գործունեության բոլոր ասպարեզներով՝ որպես պատմաբան, ազգագրագետ, սայաթնովագետ, իր երկրի, իր տարածքի հուշարձանները քննող, հետազոտող հնագետ, մի խոսքով՝ հայագետ:

Շատ թաքնված դիտարկումներ կան Չարենցին նվիրված հուշերում, որն ամբողջությամբ առաջին անգամ 1997-ին հրատարակել եմ ես՝ իմ կազմած «Չարենցի հետ: Հուշեր» գրքում:

Շնորհավորում եմ ձեզ լավ գործի կապակցությամբ եւ մաղթում շարունակականություն:

Դավիթ Գասպարյան
Գրականագետ, բանասիրական
գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր

«Հրամանապար Վուրգ» խորագիրը կրող հուշ-երեկո

Դարերի ընթացքում հայոց աշխարհում ծնվել են այնպիսի քաջազուններ, ովքեր առանց կյանքը խնայելու պայքարել են հայրենիքը շենացնելու, բարգավաճելու ու արտաքին թշնամուց պաշտպանելու համար: Ադպիսի քաջորդիներից է սիրված ազատամարտիկ, Արցախյան պատերազմի մասնակից Վուրգ Ոսկանյանը:

Ծնվել է 1941 թ. մայիսի 28-ին Սիսիանի Բռնակոթ գյուղում:

Եղել է Սիսիանի թիվ 1 դպրոցի զինղեկը: Վուրգը Սիսիանում կազմակերպել է «Ղարաբաղ» կոմիտեի գործունեությունը: 1989 թվականին նրա մտահղացմամբ եւ «Ղարաբաղ» կոմիտեի աջակցությամբ Սիսիանի Սուրբ Հովհաննես եկեղեցու հարեւանությամբ կառուցվել է Հայոց ցեղասպանության 74-րդ տարելիցը խորհրդանշող հուշարձանը:

Վուրգ Ոսկանյանն Արցախի ազատագրման պայքարի առաջին օրերից երկրապահ կամավորների ջոկատով միացել է պայքարին՝ կռվելով Զանգեզուրի, Տավուշի, Արցախի պաշտպանական դիրքերում:

Արցախի ազատագրման պայքարի առաջին օրերից երկրապահ կամավորների ջոկատով մասնակցել է ռազմական գործողություններին:

Վուրգ Ոսկանյանը զոհվել է 1993թ. մարտի 31-ին Լաչինի Բիչանիս (Վակունիս) գյուղի մարտական հենակետում:

Վուրգ Ոսկանյանի անվամբ է կոչվում Սիսիանի թիվ 4 դպրոցը, Արցախի Վուրգավան գյուղը:

Վակունիսում բացվել է հուշահամալիր 11 սիսիանցի ազատամարտիկների, այդ թվում՝ Վուրգ Ոսկանյանի հիշատակին:

2001 թվականին Վակունիսի դպրոցը վերանվանվել է Վուրգ Ոսկանյանի անվամբ:

2012 թվականին Սիսիանի Ազատամարտիկների հրապարակում տեղադրվել է Վուրգի հուշարձանը (քանդակագործ՝ Գետիկ Բաղդասարյան):

Այսպիսով՝ մարտի 31-ը Վուրգ Ոսկանյանի մահվան օրն է: Եվ ահա հեղինակային երգի կատարող, մեծ հայրենասեր Անի Մարգարյանի կողմից կազմակերպվեց հուշ-երեկո «Նարեկացի» արվեստի միությունում: Հավաքվել էին հերոսածին մայրեր, ազատամարտիկներ, եւ, ի վերջո, տարբեր մասնագիտությունների, սերունդների ներկայացուցիչներ ու բոլոր նրանք, ովքեր ճանաչել են սիրված ազատամարտիկին:

Հուշ-երեկոն վարում ու միեւնույն ժամանակ հայրենասիրական թեմաներով ասմունքում էր հաղորդավար Թագուհի Ղազարյանը, ով բոլորին տեղափոխեց դեպի 90-ական թվականներ, այսինքն այն ժամանակներ, երբ ապրեց, արարեց ու հանուն հայրենիքի պայքարեց ազատամարտիկ ու Սիսիանի 62-րդ մոտոհրաձգային գումարտակի հրամանատարի տեղակալ Վուրգ Ոսկանյանը:

Միջոցառման բացումն իրականացրեց կազմակերպիչ Անի Մարգարյանը՝ խոսելով սիրված հերոսի ու երեկույթի մասին:

Միջոցառումը բաղկացած էր երկու մասից՝ առաջին մասում հայրենասիրական երգերի ու ասմունքի ելույթներով հանդես եկան Անի Մարգարյանը, Թագուհի Ղազարյանը, աշուղ Նազելին, Արմինե Եղիազարյանը, Կարեն Մշեցին, բանաստեղծուհի Անահիտ Դանիելյանը, ասմունքող Նարեկ Մարգարյանը:

Երկրորդ մասում ցուցադրվեց ռեժիսոր, ազատամարտիկ Սամվել Թադեւոսյանի «Խոնարհ հերոսներ» ֆիլմը՝ նվիրված Վուրգ Ոսկանյանին ու նրա մյուս ժամանակակիցներին եւ հերոսներին:

Նախքան ֆիլմի ցուցադրությունը խոսեց ռեժիսոր, սցենարի հեղինակ Սամվել Թադեւոսյանը՝ ներկայացնելով այն ու ֆիլմի ստեղծման պատմությունը:

Միջոցառման վերջում ելույթով հանդես եկավ սիրված հերոսի որդին՝ Սուրեն Ոսկանյանը՝ շնորհակալություն հայտնելով կազմակերպիչներին ու բոլոր նրանց, ովքեր այդ օրը հարգել ու եկել էին հուշ-երեկոյին՝ ազատամարտիկի հիշատակը հարգելու համար:

Այսպիսով՝ Վուրգ Ոսկանյանը եւ նրա սխրանքը հավերժ կմնան մեր ու գալիք սերունդների հիշողություններում: Եվ իրոք ճիշտ է ասված, որ ոչ ոք չի մոռացվի, ոչինչ չի մոռացվի:

Գարիկ Ավետիսյան

Հունիսի 9-ին ՏԻՄ ընտրություններ՝ Գորայք համայնքում

Հայաստանի կառավարությունն ապրիլի 4-ի նիստում որոշում կայացրեց այս տարվա հունիսի 9-ին նշանակել եւ ՀՀ Սյունիքի մարզի Գորայք համայնքում անցկացնել համայնքի ղեկավարի ու ավագանու անդամների արտահերթ ընտրություններ:

Որոշման հիմնավորման մեջ նշվում է, որ Գորայք համայնքի ղեկավար Առուստամ Առուստամյանը համայնքի ղեկավարի պաշտոնում ընտրվել էր 2016 թվականի սեպտեմբերի 18-ին կայացած համայնքի ղեկավարի ընտրության արդյունքում, սակայն 2019 թվականի մարտի 1-ին հրաժարականի դիմում է ներկայացրել:

Գորայքի ավագանու թվով 7 անդամները եւս ընտրվել են 2016 թվականի սեպտեմբերի 18-ին: Ավագանու անդամներ Աշոտ Աղաջանյանը, Մուրադ Գասպարյանը, Մարտուն Թադեւոսյանը, Հրայր Թորոսյանը 2019 թվականի մարտի 1-ին հրաժարականի դիմումներ են ներկայացրել:

Այդ հանգամանքով պայմանավորված, անհնարին է դարձել Գորայք համայնքի ավագանու նիստերի հետագա անցկացումը, քանի որ ավագանու անդամների թվաքանակը նվազել է օրենքով սահմանված թվաքանակի կեսից ավելիի չափով՝ ավագանու 7 անդամից 4-ը ներկայացրել են հրաժարական:

Այդ կապակցությամբ Գորայք համայնքի ավագանու մնացած անդամները ս.թ. մարտի 1-ին կազմել են Գորայք համայնքի ավագանու լիազորությունները վաղաժամկետ դադարեցման վերաբերյալ արձանագրություն:

Մեդալների հարուստ ավարն էլ չի գոհացնում

Երեւան «Դինամո» մարզադահլիճում մարտի 22-ից 24-ը անցկացվեց Հայաստանի քիք-բոքսինգի ակումբների բաց առաջնությունը: Սյունիքի մարզի քիք-բոքսինգի «Գարեգին Նժդեհ» ակումբից մրցմանը մասնակցում էր 14 մարզիկ, որոնք ընդհանուր հաշվով նվաճեցին 9 ոսկի՝ 3 արծաթե 2 բրոնզե մեդալներ: Ակումբի մարզիչ, ՀՀ վաստակավոր մարզիչ Արա Սարգսյանի փոխանցմամբ՝ վերջին անգամ անցյալ տարվա նոյեմբերին են մասնակցել մրցաշարի: Ֆինանսական խնդիրների պատճառով 4-5 մրցաշարի չեն մասնակցել, ինչը նշանակում է մարզավիճակի կորուստ, անվստահություն սեփական ուժերի հանդեպ: Թեպետ մեդալների հարուստ ավարին, մարզիչն արդյունքներից այնքան էլ գոհ չէ, այն համոզումն ունի, որ ավելին կարելի էր անել:

Այս անգամ նորացված տեսանք «Գարեգին Նժդեհի» ակումբի մարզումնային սրահը. տեղադրվել էր նոր ռինգ, ակումբը համալրվել էր մարզագույքով, ինչի համար մարզիչն ու սաները խնդրեցին մեր լրատվամիջոցով իրենց երախտագիտությունը փոխանցել Կապանի

համայնքապետ Գեւորգ Փարսյանին՝ հովանավորության համար:

Ինչպես տեղեկացրեց ակումբի մարզիչը, առաջիկա խոշոր եւ պատասխանատու մրցումը օգոստոսին է, Wako վարկածով անցկացվելու է քիք-բոքսինգի Եվրոպայի առաջնությունը եւ լիահույս են, որ կգտնվեն հովանավորներ այդ կարեւոր մրցմանը մասնակցելու համար:

Վահրամ Օրբելյան

Խոսք հրաժեշտի. Մելանյա Միքայելյան

Կյանքի 70 -րդ տարում երկրային կյանքին հրաժեշտ է տվել հեզաբարո եւ բարեպաշտ, ընտանեկան օջախի ջերմության պահապան, շրջապատի կողմից անվերապահորեն հարգանք ու սեր վայելող մի կին՝ Մելանյա Միքայելյանը:

Ծնվել է 1949 թվականին Կապանի Բեխ գյուղում: Ծննդավայրում 8-ամյա կրթություն ստանալուց հետո ուսումը շարունակել է Կապանի թիվ 1 միջնակարգ դպրոցում: Միջնակարգն ավարտելուց անմիջապես հետո ընդունվել է Մոսկվայի տնտեսագիտական համալսարանի երեւանյան մասնաճյուղի հեռակա բաժինը: Ուսմանը զուգընթաց հաշվապահ է աշխատել Կապանի շրջկոոպի բազայում: Իսկ ուսումն ավարտելուց հետո Կապանի շրջխորհրդի գործուղմամբ Կապանի մատակարարման գրասենյակում գլխավոր հաշվապահ էր մինչեւ 1991 թվականը: Այնուհետեւ Կապանի մի քանի հիմնարկներում կատարել է գլխավոր հաշվապահի պարտականություններ՝ մինչեւ թոշակի անցնելը: Իր մարդամոտությամբ եւ անմիջական բնավորությամբ գործընկերների սիրելին էր:

Մի շարք վիրահատություններ էր տարել՝ վերջին տարիներին առողջությունը վատթարացել էր: Մարտի 25-ին էլ՝ իր հետեւից թողնելով միայն բարի հիշատակ եւ ջերմ հիշողություններ ամուսնուն, հեռացավ երկրային

կյանքից:

Լույս լինի նրա շիրիմին:

Հարազատներ

«Սյունյաց երկիր» թերթի տարեկան հաշվետվությունը

Համաձայն «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի՝ ներկայացնում ենք «Սյունյաց երկիր» թերթի 2018թ. ֆինանսական հաշվետվությունը (դրամով):

Համախառն եկամուտ՝.....14056444

Այդ թվում՝

Նվիրատվություն՝.....0

Սուբսիդիա՝.....500 000

Գովազդ (առանց ԱԱՀ-ի)՝.....2599000

Կորել է

Եգոր Կիմայի Փարսյանին պատկանող Կ-700 մակնիշի տրակտորի 71-61 ԱՓ պետհամարանիշը:
Համարել անվավեր:

Գեւորգ Դեւրիկյան գրողի հայրենասիրության դասերն ու պատգամները...

Արմեն Կարապետյան
Բանաստեղծ, հրապարակագիր, ՀՀ լրագրողների միության անդամ, պատմական գիտությունների թեկնածու

Ժամանակակից հայ արձակի աչքի ընկնող դեմքերից է կյանքից անժամանակ հեռացած Գեւորգ Դեւրիկյանը, ով իր պատմավեպերով, պատմվածքներով ու հրապարակախոսությամբ նոր, թարմ խոսք ու շնչառություն հաղորդեց հայ գրական կյանքի ընթացքին:

Կարճ եղավ նրա կյանքի ուղին, սակայն, բարեբախտաբար, հասցրեց իր մտքի եւ հոգու կարեւոր, իմաստավորված ասելիքը հասցնել, փոխանցել մայր ժողովրդին, նրա հետագա սերունդներին:

Գեւորգ Դեւրիկյանի ստեղծագործությունը խորունկ, բազմախորք շերտեր ունի, որոնց հետազոտությամբ ու իմաստավորմամբ դեռ կզբաղվի ուսուցիչների, պատմաբան եւ գրականագետ գիտնականների յուրաքանչյուր նոր սերունդ:

Գրողի ստեղծագործություններին ուսումնասիրությանն է նվիրված նաեւ վերջերս լույս տեսած «Հայրենասիրության պատգամաբերը» հոդվածների ժողովածուն, որը լույս է ընծայվել Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի բանասիրական ֆակուլտետի խորհրդի երաշխավորությամբ: Ժողովածուի խմբագիրն է բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Լիլիթ Հովսեփյանը: Նախաբանում բանասիրության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ալիտա Դոլուխանյանը նշում է, որ մանկավարժականի շրջանավարտներից մի հիանալի աստղաբույլ հարստացրել է 20-րդ դարի երկրորդ կեսի հայ գրականության՝ թե՛ արձակի, թե՛ քնարերգության եւ թե՛ թատերգության բնագավառները: Այդ աստղաբույլի երանելի անունների շարքում է Գ. Դեւրիկյանը, ով մանկավարժական բուհն ավարտել է 1961 թվականին եւ այնուհետեւ զբաղվել լրագրողական, խմբագրական եւ զուտ գրական-ստեղծագործական աշխատանքներով: Ըստ Ա. Դոլուխանյանի՝ թեպետ Գ. Դեւրիկյանը երբեք չի աշխատել որպես մանկավարժ, սակայն նրա գրվածքներն առաջնահերթ են հենց մանկավարժական առումով: Քանզի հայոց պատմության միջնադարյան շրջանի մեծերին հետեւելով՝ Դեւրիկյանը «հայ աշակերտի եւ ուսանողի մեջ հայրենասիրության սերմեր է ցանում. դրանք առողջ սերմեր են եւ խոստանում են նորանոր բերքառատ պարգեւներ:

Ժողովածուն ընդգրկում է Ա. Դոլուխանյանի, Գ. Դեւրիկյանի «Հայոց մեծերը» գրքի Ա հատորը», բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Լիլիթ Հովսեփյանի «Գեւորգ Դեւրիկյանի «Տրդատ ճարտարապետ» վեպը», բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Պարույր Սահակյանի «Գեւորգ Դեւրիկյանի «Վիրավոր կռունկ» վեպի պատմական եւ բանահյուսական արժեքը», մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Ռուզան Դոլուխանյանի «Գ. Դեւրիկյանի «Վերջին խոսքերը» պատմվածքի ուսուցումն ավագ դպրոցում», մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Գայանե Մարդյանի «Քրիստոնեական գիտելիքների ուսուցումն ըստ Գ. Դեւրիկյանի «Հավատի զորությունը» պատմվածքի, Հայաստանի ազգային գրադարանի մատենագիտության եւ գրադարանագիտության բաժնի վարիչ, բանասիրական գիտությունների թեկնածու Մայա Գրիգորյանի «Հայրենասիրության թեման Գ. Դեւրիկյանի հրապարակախոսության մեջ» հոդվածները: Ժողովածուն եւս մեկ անգամ վկայում ու վկայակոչում է վաղուց հայտնի այն ճշմարտությունը, որ մեծերի մահից հետո սկսվում է նրանց երկրորդ կենսագրությունը՝ անմահության դարաշրջանը: Գ. Դեւրիկյանի ստեղծագործության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նա երբեք չի շեղվել ճշմարիտ գաղափարական չափանիշներից, չի շեղվել ու խոտորվել այդ ճանապարհից:

Եվ երբ համեմատում, զուգահեռի վրա շաղկապում ենք նրա ստեղծագործական ուղին 1980-ականներից մինչեւ 1990-ականները՝ մինչեւ իր երկրային կյանքի ավարտը, ապա ակներեւ է դառնում, որ գրողը գաղափարաքաղաքական կտրուկ անցումներ չի ունեցել: Այո՛, այդպես է, քանզի Գեւորգ Դեւրիկյան հայ գրողի եւ հայ քաղաքացու համար ելակետը միշտ եղել, հանդիսացել են իրեն ծնած ժողովուրդը, նրա անցյալը, ներկան ու ապագան, նրա մեծ ու փոքր հոգսերը, հիմնահարցերն ու տագնապները, հայրենիքի եւ ժողովրդի հավերժության շուրջն աղերսվող ըմբռնումները, ընկալումներն ու պատկերացումները: Հայրենիքը նրա համար նաեւ շատ իրեղեն, մարմնեղեն, կոնկրետ տարածություն էր ու ժամանակ, հայրենիքը նրա հինգհազարամյա անցյալն էր, հայրենասեր արքաներն ու սպարապետներն էին, արարչագործ շինարար վարպետներն ու ճարտարապետները: Հայրենիքը բայցեւառաջ հասարակ, շարքային հայն էր, ով գիտեր ոսոխի դեմ չարանալ եւ զարկել նրան: Հայրենի հողը շենացնող ու ծաղկող ժողովուրդն է հայրենիքի անմահության եւ հավերժության գրավականը: Գեւորգ Դեւրիկյանը ստեղծագործական կյանքի ողջ ընթացքում քայլեց հայոց պատմության լույս ու մութ ճանապարհներով, այդ պատմության հեռավոր խորքերից պեղեց, հանեց ընդօրինակման արժանի, հայրենանվեր, պայծառ կերպարներ, որոնցով հայրենասիրության, խիզախության, քաջության, անանձնական սիրո ու նվիրումի գաղափարական սերմերն արմատավորեց նոր սերունդների հոգեւոր աշխարհում:

Հայոց պատմության հերոսական անցյալից հիրավի զմայլելի ոգեշունչ կերպար է չորրորդ դարի հայ հայրենասեր զորական Մանվել Մամիկոնյանը, որի մասին դրամատիկ պատմություն է մեզ ավանդել պատմիչ Փավստոս Բուզանդը: Ըստ այդ պատմության՝ սպարապետ Մանվել Մամիկոնյանն իր մահով անգամ ցանկանում է օգտակար լինել հայրենիքին: Մահվան մահճում նա հարազատներին ու յուրայիններին ցուցադրում է իր մերկ կուրծքը, որն ամբողջովին պատած էր պատերազմի դաշտում ստացած վերքերի սպիներով եւ բողոքում է ճակատագրից, թե ինչո՞ւ չի մեռնում ձիու վրա, սուրը ձեռքին, հայրենիքի թշնամիների դեմ մարտնչելիս... Սույն հուզախռով պատկերը Գեւորգ Դեւրիկյանի գրչի ներքո գեղարվեստական ուժով բանաձեւվել է այսպես ու այսկերպ. **«Մի՞թե Մամիկոնյաններն իրավունք ունեն մահիճում մեռնելու: Նրանք մահ են գտնում նժույգի վրա կամ ծանր վերքերից, մորթազերծ էին արվում, ինչպես Վասակ Մամիկոնյանը հպարտ, կամ ընկնում դավադիր ձեռքերից, որպես նրա Մուշեղ որդին: Եվ մի՞թե ես՝ Մանվել Մամիկոնյանս, պիտի կնքեի մահկանացուս այսպիսի անարգ մահով»** (Գ. Դեւրիկյան, Պատմվածքներ, Ս. Էջմիածին, 1997 թ. էջ 32):

Այսպես ու այսպես է, իր ժողովրդի պատմության խորունկ դասերով իմաստնացած գրողն ու հայրենասեր քաղաքացին բյուրեղյա խղճով ու գիտակից բարձր պատասխանատվությամբ նույն այդ պատմության խորհուրդն ու պատգամներն է վերադարձնում Մայր-երկրին ու Մայր-ժողովրդին:

Օտար նվաճողների եւ օտար վարք ու բարքերի դեմ հայ ժողովրդի մղած պայքարը՝ Գոյամարտը դարձնելով գրականության եւ պատմության նյութ, Գեւորգ Դեւրիկյանն այդ պայքարի փիլիսոփայությամբ ու տեսությամբ զինեց հայրենի հողի ժամանակակից պաշտպաններին, որոնք զենքը ձեռքին 1990-ական թվականների սկզբին մարտնչում էին ըմբոստ ու անառիկ Արցախի լեռներում: Եվ սրանով իսկ, այս ամենով իսկ Գեւորգ Դեւրիկյան գրողը կատարեց որդիական պարտքն ու պարտավորվածությունը հայրենի ժողովրդի, նրա բազմադարյան պատմության, ներկա ու գալիք սերունդների առջեւ:

Վերոնշյալ մարտնչողների շարքում նաեւ իր ավագ որդին էր՝ բանասեր, հրապարակախոս Վարդան Գեւորգի Դեւրիկյանը:

Այսպես է նա անմահանում հայ գրականության տարեգրության ու հայոց արդի պատմության ժամանակագրության էջերում:

Ուրեմն՝ վստահ ու արի շեշտադրենք՝.

«Եվ այ՛ր մի Գեւորգ Դեւրիկյան անուն...»:

«Սյունիք» ՋՕԸ. ավելի քան կես տարի աշխատավարձ չեն ստացել

էջ 3

արդեն հատկացվել է մոտ 108 միլիոն դրամը. **«108 մլն դրամն արդեն հատկացվել է, որից 75 մլն էլեկտրաէներգիայի պարտք է մարվել, 15 մլն հատկացվել է հարկային պարտականությունները կատարելուն, ինչպես նաեւ աշխատավարձեր ենք տվել»**:

Ըստ Համբարձումյանի՝ 2018 թվականի դրությամբ կուտակված 50 միլիոնը գերազանցող պարտքն արդեն 10 մլն-ի չափով նվազել է: Աշխատակիցներն արդեն 1 ամսվա աշխատավարձ ստացել են, կազմել ենք ժամանակացույց, որ առաջիկա 1-2 ամսում կուտակված պարտքը փակենք: Տնօրենի կարծիքով՝ խնդրի լուծման առաջնային օգնությունն այն կլինի, որ նախ, Մեղրիի տարածաշրջանի՝ անցյալ տարվա չստացած փոխհատուցման գումարը տրամադրվի, ոռոգման շրջանին ընդառաջ ջրօգտագործողները նախկին մատակարարումների դիմաց չմուծած վճարումները կատարեն:

Տնօրենից հետաքրքրվեցինք, թե ինչպես են տասնյակ մարդիկ համաձայնել այսքան երկար ժամանակ առանց աշխատավարձի աշխատել: Տնօրենի վստահեցմամբ՝ աշխատակիցների հետ խոսել են ըստ տեղամասերի՝ ներկայացրել իրավիճակը, նրանք էլ պատրաստակամություն են հայտնել ոռոգման աշխատանքները նորմալ իրականացնել:

«Աշխատանքներն ընթացքի մեջ են, իսկ ներքին գոտիներում արդեն սկսվել են գարնան նախապատրաստական աշխատանքները» - եզրափակեց տնօրեն Համբարձումյանը:

Օլյա Պետրոսյան
armtimes.com

Պլաստիկ թափոններից շինարարական նյութերի ստացում

Մարտի 27-ին Կապան համայնքի ղեկավար Գեւորգ Փարսյանը հյուրընկալեց «Ուրբան» հիմնադրամի խորհրդի անդամ Հայաստան Ստեփանյանին:

Հանդիպման ընթացքում քննարկվել են մի շարք հարցեր, որոնք հիմնականում վերաբերել են ծրագրի հետագա զարգացման ռազմավարությանը եւ գործողությունների մշակմանը: Ըստ ծրագրի՝ Հայաստանի երկու մարզի՝ Սյունիքի եւ Վայոց ձորի ինը քաղաքում հավաքվելու է պլաստիկ աղբը եւ վերամշակման է ուղարկվելու Կապան, ուր դրանցից սարքվելու են ավազապոլիմերային հումքով արտադրանք՝ սալարկ, կղմինդր եւ այլն: Ի հավելումն տեղեկացնենք, որ գործարանը տվել է իր փորձնական առաջին արտադրանքը:

Հիշեցնենք, որ «Բնապահպանական մարտահրավերների վերածումը հնարավորությունների. պլաստիկ թափոններից շինարարական նյութերի ստացում» ծրագիրը Կապանի համայնքապետարանն իրականացնում է «Ուրբան» հիմնադրամի ու եւս երկու գործընկեր կազմակերպության հետ համատեղ: Այն ֆինանսավորվում է Եվրամիության, ՀՀ կառավարության ու 4 գործընկեր կազմակերպության կողմից եւ իրականացվում է Սյունիքի ու Վայոց ձորի մարզերի քաղաքային բնակավայրերում:

Շուտով կլինի նաեւ պաշտոնական բացումը:

Կապանի համայնքապետարան

Ազատամարտիկ Վոլոդյա Բաղդասարյանը, ով նահատակվեց Հայաստանի անկախության վերականգնման ճանապարհին

Արցախյան ազատամարտում 45 տարեկան հասակում զոհված Վոլոդյա Բաղդասարյանի մարտական ընկերը՝ Սուրիկ Պետունցը, թերթելով զոհված ընկերոջ հետ անցկացրած հիշողությունները, գրել է հուշապատում:



1990թ. փետրվարի մառախլապատ եւ ձյունամեծ մի օր էր: Կանգնած էի Գորիսի շրջխորհրդի գործկոմի 2-րդ հարկի միջանցքում եւ մտորելով ծխում էի: Ի պաշտոնե հանդիսանալով նշված կառույցի իրավախորհրդատուն, ստեպ-ստեպ երբեմն ներկայանում էի աշխատատեղ, քանզի հիմնականում լրջորեն ներգրաված էի ազգային-ազատագրական շարժման մեջ: Մի պահ նկատեցի, որ աստիճաններով բարձրանում է շրջխորհրդի նախագահի վարորդ Սուրիկ Դալլաքյանը՝ անծանոթ, նոսրացող, ցորնագույն մազերով, միջահասակ մի տղամարդու հետ: Ներկայանալով եւ ծանոթացնելով երկուսիս, Ս.Դալլաքյանը պատճառաբանեց, թե նախագահն իրեն շտապ կանչել է եւ անհետացավ ընդունարանի դռների հետեւում: Ծանոթացանք: Զրուցակիցս Վոլոդյա Ազատի Բաղդասարյանն էր՝ Գորիսի նախկին տնային կառավարիչ Ազատ Բաղդասարյանի ավագ որդին, ով ծառայել էր խորհրդային սահմանապահ զորքերում, հրաշալի մեկնաբանում էր հայ-ադրբեջանական հակամարտությունը եւ դրա զարգացման հնարավոր հեռանկարը, խելամտորեն արծարծում էր ապագա հնարավոր ռազմական գործողությունների տակտիկա-ստրատեգիական մանրամասները, ինչպես նաեւ չբացառվող պարտիզանական կռիվների մարտավարությունը: Հանդիսանալով ԽՍՀՄ զինված ուժերի պահեստի սպա, ես կռահեցի, որ իմ առջեւ կանգնած է ռազմական գործի հմուտ գիտակ, ինչպես նաեւ հայ դատի գիտակից ու նվիրյալ մի մարտիկ: Միաժամանակ նա ակնարկեց, թե ազերիների կողմից լքված Կուրթկուլաղ գյուղում է գտնվում, զբաղվում է գյուղատնտեսական աշխատանքներով, միաժամանակ անթաքույց հավելեց, թե կարիք ունի գիտակից եւ նվիրյալ ընկերների՝ հիմնելու մարտական հենակետ, պաշտպանելու գյուղը: Այդպես էլ սկսվեց մեր ընկերությունը: Հաջորդ օրը միասին մեկնեցինք Կուրթկուլաղ, որն իր իսկ առաջարկությամբ վերանվանվել էր Մխիթարաշեն (Մխիթար Սպարապետի անվամբ): Իր դիտարկմամբ իրոք գյուղը լուրջ ստրատեգիական դիրքում էր գտնվում, ծվարած լինելով անտառապատ ձորում՝ նրա վրա ընդամենն ուղիղ գծով 100 մետր հեռավորության վրա իշխում էին բարձրադիր ադրբեջանական երկու գյուղ՝ Վերին եւ Ներքին Ջիբիքլուները:

Հետաքրքիր արարած է մարդը՝ անմիջապես գայթակղվում է գեղեցիկ գաղափարի չափագրական տեղանքում՝ իրազեկվելով իրադրությանը եւ հնարավոր ռեալ վտանգը գիտակցելով՝ ընկնում երկմտանքի մեջ: Այսպիսի հոգեբանական վիճակ էր ստեղծվել նաեւ իմ հոգում: Վոլոդյան կռահում էր հոգուս ալեկոծումը, սակայն ոչնչով չարտահայտվեց այդ մասին: Երկուսով միայնակ էինք մթնածոր հիշեցնող այդ վայրում՝ յուր կուսական անտառով, գետակի կարկաչով, գիշերահավի ու բվի քրքիջով եւ թույլատրված շների կողմից հարձակման իրական վտանգով: Ողջ գիշերը չքնեցինք, զրուցում էինք, քննարկում զանազան հարցեր:

Ես գիտակցում էի, որ իմ առջեւ հայի հատուկ տեսակ է, մարդու հատուկ տեսակ, որին լքելը սրբապղծություն կլիներ: Լռելյայն կնքվեց մեր մարտական դաշինքը: Աստիճանաբար գյուղը սկսվեց վերաբնակեցվել՝ Հայաստանի տարբեր շրջաններից, Երեւան քաղաքից մի քանի ընտանիք էր եկել՝ գեղեցիկ կյանքի ակնկալիքով: Վերաբնակների մեջ կար երկու միայնակ անձ, առանց ընտանիքի՝ ոմն Վիկտոր, իբրեւ, ըստ իր ներկայացման, ազգությամբ գերմանացի, կինը՝ հայուհի, ընտանիքը բնակվում է Աբովյանում, իսկ մյուսը՝ ազգությամբ հայ՝ Գեւորգ անվամբ՝ Շամխորից բռնագաղթած, ովքեր բավականին տարօրինակ վարքագիծ ունեին: Այդ երկուսն ամառ-ձմեռ սեւ կոմբինզոն էին հագնում, ինչպես նաեւ աներկյուղ շրջում Կուրթկուլաղ-Շուռնուխ հատվածում՝ այն պարագայում, որ 1990-92թթ. բազմաթիվ հայ քաղաքացիներ անհետացան կամ զոհվեցին Գորիս-Կապան մայրուղու այդ հատվածներում: Երբ իրադրությունը թեժացավ, վերաբնակ ընտանիքները փութով լքեցին գյուղը, սակայն նշված երկուսը մնացին: Զարմանալի եւ տարօրինակ էր, թե ինչով էին զբաղված շրջանի իրավապահ մարմինները, ո՞ւր էր նայում ազգային անվտանգության բաժինը, ինչո՞ւ չէր գործում զտման մեխանիզմը: Հակամարտող կողմերում կանգնած էին ԽՍՀՄ զինված ուժերի 4-րդ եւ 7-րդ բանակային ստորաբաժանումները: Կատարիի հեռուստաշտարակի մոտ տեղակայված էր 7-րդ բանակի սահմանապահ ուղեկալը, որի հրամանատարն էր կապիտան Անդրեյը: Նրա հետ Վոլոդյան ստեղծել էր ջերմ, փոխվստահելի հարաբերություններ, եւ, բնականաբար, լինում էին փոխայցելություններ:

1991թ. ապրիլին Վերին Ջիբիքլու գյուղի դիմահայաց ճանապարհահատվածներում զինված ընդհարում է առաջանում հայերի եւ ադրբեջանցիների միջեւ, հանգամանքների բերումով ես գտնվել եմ Գորիսում եւ մասնակցություն չեմ ունեցել: Ըստ Վոլոդյայի պատմածի՝ իրենք չորսով են եղել՝ Գորիսի վաշտի երկու պայմանագրային, ինքը եւ Քոլատակից Գեւորգ Մինասյանը: Այդ ընդհարման մասին բավականին պատկերավոր էր նկարագրում անզուգական Վոլոդյան: Դեպի Ջիբիքլու գնացող ճանապարհի ոլորանի ճամփեզրյա ջրատար առվի մեջ էին դիրքավորվել ազերիները, իսկ մեր տղաները մոտավորապես 30-40 մետր հեռավորության վրա գտնվող բոխու ծառերի հետեւում: Երկկողմանի մրրկալից կրակ էր տեղում: Վոլոդյային հաջողվում է շարքից հանել ազերիներից մեկին, իսկ նրա կողքին դիրքավորված ազերին շարունակում էր կրակի տակ առնել հայ մարտիկներին, այդ պահին վիրավորվում է Քոլատակի Գեւորգը: Հակառակի պես Վոլոդյայի փամփուշտները սպառվում են: Հանկարծակի ազերիների դիրքերից դուրս է պրծնում ԽՍՀՄ ԶՈՒ մի սպա՝ հավանաբար ցանկանալով անցնել մեր տղաների թիկունք, սակայն ճանապարհի միջնամասում վայր է ընկնում՝ առաջ նետելով ձեռքի ինքնաձիգը: Վոլոդյան թշնամու կրակի տակ սողալով մոտենում եւ վերցնում է լեյտենանտի զենքը, որով էլ վերջ է տալիս վերջին ազերուն: Ապա մոտենում է լեյտենանտին, որոշակի հեռավորությունից հրամայում է՝ «Не симулируй, встань»! Վերջինս բարձրացնում է գլուխը, ձեռքերը կտրուկ թափահարում եւ հառաչելով հոգին ավանդում: Վոլոդյան մոտենում է նրան, արձակում զրահաբաճկոնը, որի ծոցից թափվում են 10-ից ավելի կրակված ավտոմատի պահունակներ: Վոլոդյան զննում է լեյտենանտի մարմինը եւ պարզում, որ գնդակը նրա մարմին է թափանցել թիկունքից՝ պոչուկային վերջույթի շրջանում: Նշանակում է, որ ազերիները կարծելով, թե նա ցանկանում է անցնել հայերի կողմը՝ թիկունքից խփել են: Որքանով որ զավեշտալի է, ռուս լեյտենանտը որոշակի ժամանակ անց արժանացավ ԽՍՀՄ հերոսի կոչման, որի առթիվ «Труд» թերթում հրապարակվեց հրամանագիրը: Զոհված լեյտենանտի ԱԿՍ ինքնաձիգը, որպես ռազմավար, Վոլոդյան բերել էր գյուղ եւ պահում էր իր մոտ: Մի քանի օր անց գյուղ եկավ Վազգեն Սարգսյանը՝ Գորիսի վաշտի հրամանատար, ավագ լեյտենանտ Միշա Խոյլունցի հետ եւ համոզելով Վոլոդյային, զենքը տարան իրենց հետ:

1991թ. մայիսի վերջին տասնօրյակին կրկին Կուրթկուլաղում էի: Մայիսի 27-ին Շուռնուխից երկու տղա անտառային կածաններով Կուրթկուլաղ գալով հայտնեցին, որ Շուռնուխի ջոկատը ցանկանում է մայիսի 28-ը նշել հավուր պատշաճի, ուստի եկել էին խոզի միս ձեռք բերելու: Վոլոդյան մի խոճկոր մորթեց՝ իր կողմից ձրի տրամադրելով շուրջ 6 կգ՝ հայտարարելով՝ «Տարեք, քեֆ արեք»: Վերջիններս բռնելով տունդարձի ճամփան, խնդրեցին ներկա լինել վաղվա արարողությանը: Սակայն մեզ վիճակված չէր ներկա գտնվել հիշյալ արարողությանը:

Մայիսի 28-ն էր, ժամը 18-ի սահմաններում Վոլոդյան նստելով «Երազ» ավտոմեքենայի ղեկին, ինձ եւս պատվիրեց նստել: Ես առարկեցի նրան, թե չափազանց մեծ ռիսկի ենք դիմում՝ փաստարկելով, որ մայիսի 28-ի առիթով ոսոխը ճանապարհին անպայման դարան սարքած կլինի: Նա գլուխը խոնարհեց ղեկին, եւ այսպես շուրջ 5-10 րոպե լուռ էինք: Հանկարծ ներքեւից մեքենայի հռնդյուն լսվեց, եւ քիչ անց հայտնվեց մի «Ժիգուլի» ավտոմեքենա, որից դուրս եկան Գորիս քաղաքի բնակիչներ Կամո եւ Սամվել Մկրտչյանները: Նրանք հայտնեցին, որ Տաթեւի ճանապարհով գնացել են Կապան եւ այժմ վերադառնում են Գորիս: Վոլոդյան մտախոհ ակնարկեց, թե ճանապարհն անվտանգ չէ, սակայն Սամվելը ծիծաղելով ցույց տվեց ձեռքի ավտոմատը: Այնուհետեւ նրանք շարժվեցին դեպի Գորիս, իսկ մենք բարձրացանք Նոր Առաջաձոր՝ հյուրընկալվելով մեր ընկեր Գրենիկին, որտեղ էլ գիշերեցինք: Հաջորդ օրը պարզվեց, որ տղաներն ընկել են ոսոխի դարանը, Կամոն սպանվել էր, իսկ Սամվելը՝ գլխից վիրավորված, անտառներով հասել Կարմրաքար:

1991թ. հուլիս ամիսն էր, գտնվում էի Գորիսում եւ պատահականորեն հանդիպեցի «Կատարի» ուղեկալի հրամանատար Անդրեյին, ով «Ուրալ» ավտոմեքենայով սնունդ էր տանում Կատարի. ի դեպ վարորդն ազգությամբ ուզբեկ Իլհոմն էր: Վերջիններիս հետ մեկնեցի Կատարի: Բեռնաթափումից հետո մեկնեցինք դեպի Կուրթկուլաղ եւ ավտոմայրուղու խաչմերուկում հանդիպեցինք հակառակորդի կողմից չեզոք դիրք անցած 4-րդ բանակային զորամիավորման մի կապիտանի՝ Օլեգ անվամբ, երկու շարքայինի հետ: Օլեգն Անդրեյին խնդրեց իրեն եւս տանել, հայտնելով, որ Վերին Ջիբուքլու են գնում: Երբ հասանք Ջիբիքլուի ճամփաբաժին՝ Անդրեյն ինձ հարցրեց. «Поехали что ли, Сурик», առանց երկմտելու դրական պատասխան տվեցի, սակայն երբ «Ուրալը» ասֆալտից անցավ Ջիբիքլուի խճապատ ճանապարհը, գիտակցեցի, որ անխոհեմ քայլի եմ գնացել: Ես հագնված էի կիսաքաղաքացիական-կիսազինվորական եւ նստած էի Իլհոմի ու Անդրեյի արանքում: Երբ մեքենան կանգ առավ ազերիների շտաբի մոտ, կողակամիջակին թռավ մի ազերի լեյտենանտ եւ զրույցի բռնվեց Անդրեյի հետ, նկատելով ինձ՝ հարցրեց, թե ով եմ ես: Անդրեյը հստակորեն պատասխանեց՝ «Մեր նոր ծառայողներից է»: Շարժվեցինք դեպի Կուրթկուլաղ, եւ ճանապարհին խորհում էի իմ անմիտ արարքի մասին: Հասանք գյուղ եւ ուղեւորվեցինք Վոլոդյայի մոտ, ով հնձած խոտ էր մամլում: Հարցրեց՝ որտեղի՞ց եք գալիս, պատասխանեցինք՝ Ջիբիքլուից: Վոլոդյան անակնկալի եկած ապշած ինձ էր նայում, ապա փրփրեց աջ ու ձախ նախշելով, կատաղած վրա տվեց ինձ՝ թունդ հիշոցներով ասելով, թե որ էդ մերը... քեզ տար թուրքերին, որ քարը պետք է գլխիս տայի: Անդրեյն ութ տարի ծառայել էր էջմիածինում եւ որոշակիորեն գիտեր հայերեն, մասնավորապես հայհոյանքները: Նա մոտեցավ Վոլոդյային, մտերմաբար ակնարկեց՝ «Не оскорбляй, Володя, если я хотел бы, за его одного уху мог бы получать 2 тысяча рублей»: Իսկ որ ԽՍՀՄ զինվորականները բազմիցս զբաղվել են այդ ստոր առեւտրով, քաջ հայտնի էր բոլորիս:

1992թ. մայիսին Վոլոդյան Գորիս էր եկել: Մայիսի 4-ին «Կամազ» ինքնաթափով մեկնեցինք Կուրթկուլաղ՝ Վոլոդյան էր, կինը՝ Մանիկը, որդին՝ Արտակը, լուսահոգի Ավյան Գագիկը եւ ես: Հասնելով փոքր Կատարու խաչմերուկ, թեքվեցինք աջ եւ Աղբուլաղով իջանք Կուրթկուլաղ: Վոլոդյան տիկնոջը պատվիրեց սեղան բացել: Դեռ մի կտոր հաց չէինք կտրել, երբ արնաշաղախ ներս մտան երկու երիտասարդ: Պարզվեց, որ նրանք Շուռնուխում տեղակայված ՀՀ ՆԳՆ ՄՀՕՋ-ի (միլիցիային օժանդակող հատուկ ջոկատ) մարտիկներ են, ովքեր նպատակ ունենալով մեկնել Կապան, ցանկացել են ավտոմայրուղով անցնել՝ արհամարհելով իրական վտանգը: «ՈՒԱԶ» ավտոմեքենան նռնակներով ցանկացել են խոցել, սակայն վրիպել են. արկը դիպչելով ճանապարհի հողաթմբին՝ պայթել էր, սակայն հետընթաց ալիքով փշրել էին «Ուրալի» դիմապակիները, որի բեկորներից նշված երկու մարդիկ լուրջ վերքեր էին ստացել: Վոլոդյան կնոջը պատվիրեց վիրակապել, իսկ ինձ եւ Գագիկին հրահանգեց հետեւել իրեն: Զառիվերով բարձրանում էինք դեպի անտառապատ բարձունք, որպեսզի ուսումնասիրենք իրադրությունը: Գագիկը վերջնապահ էր եւ որոշակիորեն մեզանից հետ էր մնացել: Վոլոդյան շշուկով ասաց, թե տղան առաջին անգամ է այստեղ եկել, տանելու ենք կրակի տանք, համոզիր՝ թող հետ դառնա: Վոլոդյան սկսեց բաձրանալ, իսկ ես սպասեցի Գագիկին: Երբ նա հասավ ինձ, նրան ակնարկեցի, թե առանձին բան չկա, կնայենք եւ կուսումնասիրենք ընդհանուր իրադրությունը եւ կվերադառնանք՝ պատվիրելով վերադառնալ գյուղ: Նա վիրավորված պոռթկաց: Եվ բարկացած սկսեց բարձրանալ: Երկուսով տեղ հասանք, Վոլոդյան դիրքավորված քարակույտի հետեւում՝ զննում էր հեռադիտակով դիմացի բլուրները, որտեղ թառած էին թլպատված շները: Նա արդեն տեղորոշել էր թշնամու նռնակաձիգի տեղը, ով ստեպ-ստեպ բարձրանում էր եւ կոմուլյատիվ արկով ցանկանում էր խոցել ոլորանի մոտ կանգնած «Ուրալ» ավտոմեքենան, սակայն՝ ապարդյուն: Վոլոդյան վերցրեց իմ ձեռքի «Կարաբինը» եւ սկսեց կրակել նռնակաձիգի ուղղությամբ, սակայն ըմբռնելով, որ առանց նշանառու զենքի անհնար է շարքից հանել նրան, դադարեցրեց կրակը: Նկատեցինք, որ փոքր Կատարիի ուղղությունից տեղ հասած մեր կազմավորումներն աստիճանաբար ծավալվում են մեր ուղղությամբ: Վոլոդյան ինձ հրահանգեց դիրքավորվել քարակույտի հետեւում եւ կրակի տակ պահել ոսոխի նռնակաձիգին, իսկ ինքը գնաց մեր առաջապահ ուժերին ընդառաջ: Գագիկը պառկել էր գետնին եւ շփոթված դիտում էր ծավալվող մարտական գործողությունները, իսկ ես «Կարաբինով» սկսեցի զսպիչ կրակ վարել նռնակաձիգի ուղղությամբ: Որոշակի ժամանակ անց, հետաքրքրությունից դրդված, ցանկացա տեղեկանալ, թե ինչ են պլանավորել տեղ հասած մեր ուժերը, Գագիկին խնդրեցի մնալ այդ դիրքում, իսկ ես նույնպես մեկնեցի Վոլոդյայի գնացած կածանով: Շուրջ 100 մետր խորանալով անտառում՝ Վոլոդյային գտա երեք ՄՀՕՋ-ականների հետ զրուցելիս: Վոլոդյան տեսնելով ինձ, բարկացած շշպռեց ինձ, ասելով՝ «Քեզ դիրք եմ վստահել, ինչո՞ւ ես լքել»: Ամոթահար հետ վերադարձա ոչ թե եկած կածանով, այլ ուղղակի բռնեցի կարճ ճանապարհ եւ մտա մի մեծ բացատ, որտեղ ինձ գտավ ազերի գնդացորդը: «Կարաբինը» առաջ բռնած, արագ պառկեցի եւ սկսեցի սողալ՝ փորձելով դուրս գալ հակառակորդի գնդացրային կրակի շառավղից: Լսում էի, թե ինչպես ինձնից շուրջ երկու մետր հեռավորությամբ շաչում են գնդացրային համազարկերը, իսկ անտառային կանաչ խոտը կարծես սուր գերանդու բերան ընկած հնձվում էր: Շուրջ 30 մետրի չափով սողալուց հետո, դուրս եկա կրակի տակից եւ արագ վազքով հասա իմ դիրքին:

Շարունակելի:

Լեւոն Մնացականյան. «Պետք է պատրաստվենք ռազմական գործողությունների»

«Մենք պատրաստվում ենք վաղվա պատերազմին, հետեւում ենք: Հիմա էլ հետեւում ենք, հաշվի են առնվում հնարավոր զարգացումները: Հաշվի են առնվում այն բոլոր զենքերը, որ Ադրբեջանը ձեռք է բերում տարբեր երկրներից: Արտաքինից այսօր ընդհանուր իրավիճակը հանգիստ է, եթե մենք իրավիճակին նայենք, կարող է սխալվենք»,- Արցախի հանրային հեռուստաընկերության եթերում ասել է Արցախի պաշտպանության պաշտոնաթող նախարար, Արցախի ԱԻ պետական ծառայության տնօրեն Լեւոն Մնացականյանը:

Լեւոն Մնացականյանը նշել է, որ մենք պետք է զգանք, որ հակառակորդն ամեն օր ձեռք է բերում նոր նմուշներ, ընդլայնում իր զինանոցը, ընդգրկում է հրահանգիչներ տարբեր առաջատար երկրներից.

«Չեմ կարծում, որ այդքանն արվում է խաղաղության համար, ուզում ես խաղաղություն, ապա պետք է պատրաստվես պատերազմի: Ավելի հակված եմ ասել, որ պատերազմ լինելու է. Արցախի անկախությունը դե ֆակտո կա, պետք է հաստատվի նաեւ դե յուրե, եւ հարցի լուծման միակ ճանապարհը ռազմականն է, եւ պետք է պատրաստվենք ռազմական գործողությունների, եւ վաղ թե ուշ այդ գործողությունները կլինեն»:

Դեռեւս պահպանվում է ականների վտանգը

Հայաստանի չորս մարզերում՝ Տավուշում, Սյունիքում, Գեղարքունիքում եւ Վայոց ձորում պահպանվում է վտանգն ականներից:

Հումանիտար ականազերծման կենտրոնի տվյալներով՝ ենթադրաբար ականային վտանգ ներկայացնող տարածքների ընդհանուր մակերեսը կազմում է **ավելի քան 17 մլն քառակուսի մետր**, անմիջապես այդ տարածքին մոտ ապրում է մոտ 35 հազար մարդ:

Ականային վտանգի հետ կապված տարբեր միջադեպերի հետեւանքով վերջին տասնամյակներին տուժել է ավելի քան 700 մարդ: 2018 թվականի նոյեմբերի դրությամբ Հայաստանում կա 123 պոտենցիալ վտանգավոր տեղամաս: Ականազերծվել է 10-ը՝ **209689 քառ. մետր տարածությամբ**: **Բացի Հայաստանի սահմաններում աշխատանքից,** կենտրոնի ականազերծողները փետրվարի 8-ից իրականացնում են հումանիտար ականազերծում Սիրիայում: Հալեպում հումանիտար առաքելությունում ականազերծողների հետ միասին գործում են նաեւ բժիշկները: Նրանք բուժօգնություն են ցուցաբերում չորս հիվանդանոցներում:

Շնորհանդես Կապանի արվեստի մանկական դպրոցում

Կապանի արվեստի մանկական դպրոցում այս անգամ հանդիսականին ունկնդիր եղավ դաշնամուրային երաժշտության: ՀՀ վաստակավոր արտիստ, միջազգային մրցույթների դափնեկիր, Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր, դաշնակահար Արմեն Բաբախանյանը նախ ներկայացրեց «Հայ դաշնամուրային երաժշտության անթոլոգիայի» 4-րդ հատորը, որ ընդգրկում է կոմպոզիտորներ Ալեքսանդր Սպենդիարյանի (1871-1928) եւ Սարգիս Բարխուդարյանի (1887-1973) դաշնամուրային ստեղծագործությունները: Դաշնակահարը նաեւ հանդես եկավ այդ կոմպոզիտորների ստեղծագործությունների կատարմամբ՝ հընթացս անդրադառնալով դրանց ստեղծման պատմությանը: Նա մասնավորապես նշեց, որ դաշնամուրային երաժշտությունն ըստ ամենայնի պրոպագանդված չէ, որ երաժշտասերների համար անակնկալ էր, որ Տիգրան Չուխաջյանն ունի մեծ թվով դաշնամուրային ստեղծագործություններ, որոնք նույնիսկ չեն հրապարակվել:

«Հայ դաշնամուրային ստեղծագործությունների անթոլոգիան» ընդգրկում է հայ դաշնամուրային երաժշտության մեկուկես դարի պատմությունը, եւ մինչեւ այժմ թողարկվել է երեք ձայնասկավառակ՝ Տիգրան Չուխաջյանի, Նիկողայոս Տիգրանյանի, Ստեփան Էլմասի, Մակար Եկմալյանի եւ Կոմիտասի ստեղծագործություններով:

Միջոցառման ավարտին կրթօջախի տնօրեն Մարինա Նահապետյանը երախտագիտություն հայտնեց դաշնակահարին՝ հայ կոմպոզիտորների՝ հազվադեպ հնչող ստեղծագործությունները հանդիսականին մատուցելու համար: Միջոցառման մասնակիցներին բաժանվեցին անթոլոգիայի 4-րդ հատորը ընդգրկող կոմպոզիտորների ստեղծագործությունների ձայնասկավառակը:

Վահրամ Օրբելյան

Դավիթ Գասպարյան. «Չարենցը, Բակունցը եւ մյուսները»

Հարցազրույց գրականագետ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Դավիթ Գասպարյանի հետ

էջ 4

Շատ կարեւոր վկայություններ կան Ակսել Բակունցի կնոջ՝ Վառվառա Չիվիջյան-Բակունցի՝ 1954 թվականին գրված եւ գրողին արդարացնելու կոչված մի նյութի մեջ, որ դարձյալ հրապարակել եմ իմ նշված գրքում, նաեւ «Հայոց լեզու եւ գրականություն» հանդեսում: Շատ կարեւոր հուշագրություն է:

Այն էլ ասեմ, որ իմ «Ակսել Բակունց: Կյանքը եւ ստեղծագործությունը» մենագրության մեջ Բակունցից 17 կտոր անտիպ նյութ եմ զետեղել, էլ չեմ ասում դատական գործն ամբողջությամբ եւ բանտից գրած սիրտ մղկտացնող դիմումները: 1976-1984թթ. Հայաստանի գիտությունների ակադեմիայի Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտը լույս ընծայեց Ա. Բակունցի երկերի քառահատոր ժողովածուն: Դրանից հետո մամուլում լույս տեսան բազմաթիվ ուշագրավ նյութեր, որոնք լրացնում են նրա կյանքի ու ստեղծագործության էջերը: Ժամանակն է՝ այն չորս հատորյակին ավելացնել հինգերորդ հատորը, որտեղ տեղ պիտի գտնեն նաեւ Բակունցի անտիպները: Այս նախաձեռնության կապակցությամբ էլ ինձ խոստացան օգնել, բայց ոչինչ չարեցին: Օգնելը վերաբերում է սոսկ հրատարակչական գործին:

- Բակունցի գերեզմանի տեղի վերաբերյալ Ձեր տեսակետին տեղյա՞կ են պատկան մարմինները, որոնք ի վիճակի են խնդրին ընթացք տալ:

- Ես Չարենցով, Բակունցով, Մահարիով, մյուսներով զբաղվել եմ դեռեւս 1970-ից, 1988 թվականին ամեն ինչ ներքաշել եմ աղբյուրագիտական նոր հայտնագործությունների փուլ. անգամ, երբ Կենտկոմի աշխատակից էի, իմ հարցը դրել էին լուրջ քննարկման՝ հեռացնե՞լ, թե՞ չհեռացնել, արդյո՞ք գաղափարական շեղում չէ այս մարդու արածը: Նստած էի իմ աշխատասենյակում, մեկը եկավ, թե՝ տեղյա՞կ եք, որ Ձեր հարցն են քննարկում, ասի՝ չէ՛: Իրոք, նման բան եղավ, եւ դրական որոշում կայացրին, այսինքն՝ ինձ չհամարեցին ժողովրդի հերթական թշնամի: Ժամանակները փոխվել էին, իրենք՝ ոչ: Իմ փրկությունը պայմանավորված էր հրապարակայնության պահանջով: Իմ դեմ ելավ նաեւ կանանց մատյան գունդը՝ Անժելա Ստեփանյանը, Սիլվա Կապուտիկյանը, Անահիտ Սահինյանը, էլի ոմանք. ասում էին՝ ինչ գիտենք անցյալի մասին, մեզ բավական է, նոր տվյալներ մեզ պետք չեն: Ա՜յ քեզ բան:

Այնպես որ, այժմ պետք է ի մի բերել ինչ կա, ինչ չկա, հենց ձեր թերթի միջոցով մի գործնական խորհուրդ ստեղծել, եւ դիմել մեր նոր իշխանություններին: Պիտի դուրս գանք ամոթալի այս վիճակից, չպիտի գերի մնանք այն մարդկանց, ովքեր գործի կարեւորությունը չեն գիտակցում կամ անտարբեր են:

- Իսկ այս ամենի մեջ ո՞րն է Հայաստանի գրողների միության, չեղած մշակույթի նախարարության դերը:

- Ասեմ, որ երկուսն էլ ոչ մի դեր չունեն եւ չեն էլ ուզում ունենալ, եւ եթե վերոնշյալ հարցերով դիմեք նրանց, նրանք այդ հարցերը կդնեն ամենաստորին դարակներում եւ կմոռանան: Գրողների միությունն այսօր անգամ Թումանյանի, Կոմիտասի հանդեպ խանդ ունի, որովհետեւ ասում են՝ նրանք անցյալ են, հիմա մենք ենք, մեր մասին գրեք: Մենք ենք, որ կանք: Եվ գրում են գավառացի Բելինսկիներն ու Չերնիշեւսկիները՝ այդպես էլ չհասկանալով, թե ինչ է կենդանի գրականությունը: Իսկ մշակույթի նախարարությունը միայն ամոթալի բաներ է անում, ես նրանց չեմ վստահում:

- Այնուամենայնիվ, մեզ համար հետաքրքիր է մշակույթի նախարարությունը վերացնելու, վերակազմավորելու, այլ կառույցի հետ միավորելու հետ կապված Ձեր դիրքորոշումը:

- Մշակույթի նախարարությունը 1988-ից առ այսօր աչքի չի ընկել ազգաշահ գործառույթներով: Դա այն նախարարությունն է, որ թույլատրեց Երեւանի կենտրոնական հրապարակի հուշարձանի ճարտարապետական գլուխգործոց պատվանդանի քանդումը. Լենինի ժամանակն ավարտվել էր, եւ նա ինչպես եկել էր, այդպես էլ պետք է գնար, բայց պատվանդանն ի՞նչ մեղք ուներ: Դա այն նախարարությունն է, որ տարբեր նախարարների օրոք թալանեց մշակութային արժեքները, յուրացրեց մշակութային կենտրոնները, 2012-ին տպագրված Չարենցի անտիպների գիրքը ձերբակալեց, կալանավորեց եւ առայսօր փակած պահում է: Դա այն թվականին էր, երբ Երեւանը գրքի համաշխարհային մայրաքաղաք էր հռչակվել, եւ գիրք ձերբակալեցին այդ մարդիկ: Հետո եկավ մյուս նախարարը՝ Արմեն Ամիրյանը: Հանդիպեցի մեկ-երկու անգամ՝ ինչ-ինչ հարցեր քննարկեցինք՝ զրո արդյունք, վերջում ամեն կերպ խուսափում էր հարցի քննարկումից: Հետո այս նորերը եկան, այլեւս չդիմեցի ոչ մեկին, չհանդիպեցի, ոչ մեկի հետ չքննարկեցի, կարծում եմ՝ ապարդյուն է:

Ավելացնեմ նաեւ մշակութային եղեռնը, որին ենթարկվեցին շատ արձաններ. օրինակ՝ Սեւանի ճանապարհին՝ Չարենցավանի մուտքի արձանի պղինձը կերան, պառկած կնոջ պղնձե շապիկը հանեցին՝ մնաց բետոնը, այն էլ վերացրին, որպեսզի հետքերը կորչեն: Ո՞վ պիտի պատասխան տա մշակութային այս արժեքների ոչնչացման համար: Ասածս այն է, որ մշակույթի նախարարությունը շատ կարեւոր է, բայց այն գործառույթները, որ նա անում է, թերի է, պակասավոր եւ այնքան վատ, որ եթե նախարարությունն անգամ վերացնեն, բացը չի երեւա:

- Ասենք նաեւ՝ մշակույթի նախարարությունը եւ մարզերը, գյուղերն իրար հետ ոչ մի առնչություն չունեն, միայն գրադարանների օրինակը վերցնենք:

- Ողբալի է գրադարանների վիճակը, խորհրդային տարիներին ինչ տպագրվում էր, գրադարաններին հատկացնում էին, այս վերջին 30 տարում նման բան չկա, աղքատություն է, խեղճություն, եղած նվազ միջոցների վատնում կամ թալան:

Այնքան ժամանակ այսպես կշարունակվի, մինչեւ ճիշտ ու սրտացավ մասնագետը հայտնվի իր տեղում եւ ոչ թե պատահական մեկը: Դժբախտաբար, այդ պատահականները ոչ միայն գործը չգիտեն, այլեւ շատ հավակնոտ են եւ կառուցելու փոխարեն գիտեն միմիայն քանդել...

Զրույցը՝ Վահրամ Օրբելյանի

Սյունյաց երկիր

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռ.՝ (0285) 5 25 63,
(091) 45 90 47,
(077) 45 90 47:
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
էլ.կայք՝ www.syuniacyerkir.am

® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:

«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

QR կոդ

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1150, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 26.03.2019թ.: